

Գիւղացիները ասացին, որ կը խորհրդակցեն հասարակութեան հետ ու պատասխան կը տան, և մնառ բարեւ անելով հեռաւան գրգռուած գրութեան մէջ: Ճանապարհի կողմից երկար ժամանակ լսուեւ էր նրանց բարձր խօսակցութեան հետզհետէ հեռացող ձայնը: Եւ մինչև ուշ երեկոյեան աղմկուեւ էին նրանց ձայները, որոնք հասնուեւ էին Նեխիլիւզովին գիւղից գետի վրայով:

Հետեւեալ օրը գիւղացիները չէին աշխատուեւ, այլ քննուեւ էին աղայի առաջարկութիւնը: Հասարակութիւնը երկու կուսակցութեան բաժանուեց. մէկը՝ աղայի առաջարկութիւնը ձեռննտու և անվտանգ էր համարուեւ, միւրը՝ այդ բանի մէջ մի խաղ էր տեսնուեւ, որի էութիւնը չէր կարողանուեւ հասկանալ, ուստի աւելի ևս շատ էր վախենուեւ: Սակայն երրորդ օրը ամենքն էլ համաձայնեցին ընդունել առաջարկուած պայմանները և եկան Նեխիլիւզովին յայտնելու ամբողջ հասարակութեան վրճիռը: Այդ համաձայնութիւնը կայացաւ մի պառաւի յայտնած կարծիքի շնորհիւ, որ ընդունեցին ծերունիները և որ ցրեց բոլոր երկրիչները աղայի վարմունքի խաբէական լինելու կողմից. պառաւը աղայի առաջարկութիւնը բացատրեց նրանով, որ նա սկսել է հոգու մասին մտածել և այդպէս է վարուեւ հոգին փրկելու համար: Այդ բացատրութիւնը հաստատուեւ էր այն առատ ողորմութիւններով, որ Նեխիլիւզովը բաժանուեւ էր Պանօվոյի աղքատ բնակիչներին: Իսկ այն բանի պատճառը, որ Նեխիլիւզովը այդպէս ողորմութիւն էր բաժանուեւ, այն էր, որ նա այդտեղ առաջին անգամը իմացաւ, թէ ինչ ծայրայեղ աղքատութեան և խստակեցութեան են հասել գիւղացիները: Սատիկ ազդուելով այդ աղքատութիւնից, նա թէն գիտէր, որ իր արածը խելացի բան չէ, բայց չէր կարողանուեւ չը բաժանել ձեռքի ունեցած փողերը, որոնք շատ շատ էին, որովհետև նա ստացել էր անցեալ տարի ծախած՝ Կուզմինսկօէ կալուածի անտառի գինը և բացի դրանից՝ նախաժամար կալուածի անտառները և գործիքները համար:

Հէնց որ իմացան, որ աղան փող է տալիս ուղուորներին, իսկոյն ոչ միայն գիւղից, այլ և ամբողջ շրջակայքից սկսեցին խուճը-խուճը գիւղացիներ, մանաւանդ կանայք, դիմել նրան՝ օգնութիւն խնդրելով: Նա բոլորովին չը գիտէր ինչ անել, ինչպէս վճռել, թէ ում և որքան պէտք է տալ: Նա զգուշ էր, որ անկարելի էր խնդրող ու ակնյայտնի աղքատ մարդկանց չը տալ փող, որից ինքը շատ ունէր: Իսկ տալ պատահաբար նրանց,

որոնք խնդրում են, միայն չունենա: Այդ դրութիւնից դուրս գալու միակ ելքը գիւղից հեռանալն էր: Եւ նա շտապեց հեռանալ:

Պանօլօյում անցկացրած վերջին օրը Նեխիւիւդօվը սկսեց տնտղել տան մէջ մնացած բաները: Բանալով մօրաքերոջ՝ կարմիր փայտէ, ուռած փորով և առիւծների գլուխների մէջ անցրած անագապղնձէ օղակներով հին պահարանի ներքեի աչքը, նա գտաւ այնտեղ մեծ թուով նամակներ և նրանց արանքին մի լուսանկար, ուր խմբով հանուած էին Սօֆիա Իվանօվնան, Եկատերինա Իվանօվնան, ինքը՝ ուսանող ժամանակ և Կատիւշան՝ մաքուր, թարմ, սիրուն և կենսուրախ: Տան մէջ եղած բոլոր բաներից Նեխիւիւդօվը վերցրեց միայն նամակները և այդ լուսանկարը: Մնացած բոլոր բաները նա թողեց ջրաղացպանին, որ, մշտաժպտ գործակատարի միջնորդութեամբ, պաննապատիկ էփան գնով առաւ Պանօլօյի տունը, որ պէտք է քանդէր ու նիւթերը վերցնէր, և բոլոր կահ-կարասիքը:

Յիշելով, թէ ինչպէս էր ինքը Կուզմիսկօէ կալուածում ափսոսանք զգում սեփականութիւնից զրկուելու համար, Նեխիւիւդօվը այժմ զարմանում էր, թէ ինչպէս կարող էր ինքը այդպիսի բան զգալ: Այժմ նա շարունակ զգում էր ազատման բերկրութիւն և նորութեան հրճուանք, նոյնպիսի հրճուանք, ինչպէս զգում են անշուշտ ճանապարհորդները՝ նոր երկիր գտնելիս:

X

Քաղաքը այս անգամ առանձնապէս տարօրինակ ու մի նոր տեսակ տպաւորութիւն գործեց Նեխիւիւդօվի վրայ: Երեկոյ էր, երբ կայարանից իր բնակարանն էր գնում, և լապտերները արդէն վառել էին: Բոլոր սենեակներում դեռ նաւթալինի հոտ էր փչում և Ագրաֆենա Պետրօվնան ու Կօրնէյը, երկուսն էլ, ջարդուած ու գազազած էին և նոյն իսկ կուռել էին իրար հետ տան բաները կարգի բերելու պատճառով, որոնց գործածութիւնը, կարծես, նրանով էր սահմանափակուած, որ նրանց փողում էին չորացնելու և յետոյ պահում էին: Նեխիւիւդօվի սենեակը ազատ էր, բայց այնտեղ այնքան մեղուկներ էին դարսել, որ մէջը դժուար էր անց ու դարձ անել, ասպէս որ պարզ էր, որ Նեխիւիւդօվի գալը խանդարել էր այն գործերին, որոնք, ինչ-որ տարօրինակ ինէրցիայով, կատարուած էին այդ բնակարանի մէջ: Այդ բոլորը իր ակնյայտնի անմոռութեամբ, որին նա ինքն էլ մի ժամանակ մասնակից էր,

այնքան անախորժ թուաց Նեխիլեզօվին գիւղական կարօտութեան տպաւորութիւնից յետոյ, որ նա վճռեց միւս օրն և եթ տեղափոխուել հիւրանոց, թող տալով որ Ագրաֆենա Պետրօվնան տուն ու տեղը հաւաքի այնպէս, ինչպէս նա հարկաւոր է համարում, մինչև իր քրոջ գալը, որ վերջնապէս կը կարգադրի տան մէջ եղած բոլոր բաները:

Նեխիլեզօվը առաւօտը վաղ դուրս եկաւ տանից, բանտի մօտերը առաջին պատահած շատ համեստ ու կեղտոտ կահաւորութեամբ սննականքում վարձեց երկու համարից բաղկացած կացարան և, կարգադրելով, որ տեղափոխեն այնտեղ տանից վերցրած բաները, գնաց փաստաբանի մօտ:

Իրակը ցուրտ էր: Փոթորկալից ու անձրեային եղանակներից յետոյ սկսուել էին դարնանը սովորաբար տեղի ունեցող ցրտերը: Այնքան ցուրտ էր և այնպիսի սուր քամի էր փչում, որ Նեխիլեզօվը մրսում էր իր բարակ վերարկուով և հետզհետէ արագացնում էր քայլերը տաքանալու համար:

Նրա յիշողութեան մէջ պատկերանում էին գիւղացի մարդիկ,—կանաչ, երեխաներ, ծերունիներ, որոնց աղքատութիւնը և ուժասպառութիւնը նա, կարծես, այժմ առաջին անգամն էր տեսնում, և մանաւանդ ժպտերես ծերանման երեխան, որ տարուբերում էր ձերք ունեւորը,—և նա յակամայից համեմատում էր նրանց հետ այն, ինչ որ տեսնում էր քաղաքում: Մտաւճառների, ձկնալճառների և հազուատեղէնի խանութների առաջով անցնելիս նա ապշած էր մնում,—կարծես թէ առաջին անգամն էր տեսնում այդ,—նկատելով այդքան մեծ թուով կուշտ ու կուռ, մնում կորած ու մաքուր խանութպաններ, որոնց նման մի հատ մարդ չէր կարելի գտնել գիւղում: Նոյնպէս կուշտ ու կուռ էին սեփական կառքերի հաստաքամակ ու մէջքերը կոճակներով զարդարած կառապանները, երիզապատ գլխարկներով դռնապանները, գոգնոցաւոր ու խոպոպաւոր աղախինները, և մանաւանդ վարձու սրբնթաց կառքերի ածիլած վզարմատներով կառապանները, որոնք, իրանց կառքերի մէջ թեք ընկած, արհամարհաբար և անառակաբար նայում էին անց ու դարձ անողներին: Այդ բոլոր մարդկանց մէջ Նեխիլեզօվը յակամայից տեսնում էր այժմ նոյն գիւղացիներին, որոնք զբոլուել էին հողից և այդ պատճառով թափուել էին քաղաք: Նրանցից ոմանք կարողացել էին օգուտ քաղել քաղաքային պայմաններից ու դարձել էին աղաների նման մարդիկ և ուրախանում էին այդ բանից, միւսները՝ քաղաքում աւելի ևս վատ պայմանների մէջ էին ընկել, քան գիւղում, և աւելի ևս ողորմելի էին, քան այնտեղ: Այդպէս ողորմելի թուացին Նեխիլե-

դօլիին այն կօշկակարները, որոնց նա տեսաւ բանելիս միները-
նայարկի պատուհանի առաջ. այդպէս էին նաև նիհար, գու-
նատ ու զգգուած լուացարար կանայք, որոնք քշտած վտիտ ձեռ-
ներով արդուկում էին բաց պատուհանների առաջ, որոնցից
փաթիլ-փաթիլ սապնաշողի էր դուրս ժայթքում. այդպէս էին
այն երկու՝ զոգնոցաւոր և անկօշիկ ու միմիայն ոտի փաթա-
թաններով ներկարարները, որոնք պճեղներից մինչև գլուխ թա-
թախուած էին ներկի մէջ: Արմունկից վերև քշտած արևառ,
չլուտ ու թոյլ ձեռքերով նրանք կրում էին ներկի մի դոյլ և
շարունակ կուում էին իրար հետ: Նրանց դէմքերը յոգնատանջ
էին ու զայրացած: Նոյնպիսի դէմք ունէին նաև փոշոտած ու
սևուկ ապրանքակիր կառապանները, որոնք տմոմբում էին ի-
րանց կառքերի վրայ: Նոյնպիսի դէմք ունէին նաև ուռուտած և
գջլտած մարդիկ ու կանայք, որոնք իրանց երեխաների հետ փո-
ղոցների անկիւններում կանգնած ողորմութիւն էին խնդրում:
Նոյնպիսի դէմքեր էին երևում նաև այն պանդուկի բաց պատու-
հաններում, որի մօտով անցաւ Նեխիլեղօվը: Կեղտոտ սեղաննե-
րի շուրջը, որոնց վրայ դարսած էին շիշեր և թէյի ամաններ և
որոնց արանքներով, օրօրուելով, արագ-արագ անց ու դարձ
էին անում փոքրաւորները, նստած էին և զոգգոռում ու եր-
գում էին զանազան մարդիկ, քրտնած, կարմրատակած ու չլմած
երեսներով: Մէկը նստած էր պատուհանի մօտ, յօնքերը վեր
քաշած ու չրթունքները դուրս չոած, և նայում էր դէպի առաջ,
կարծես աշխատելով յիշել ինչ-որ մի բան:

«Մի հարցնող լինի, թէ ինչու են այդ մարդիկը բոլորը
հաւաքուել այստեղ», մտածում էր Նեխիլեղօվը ակամայ ներս
չնչելով ցուրտ քամու բերած փոշու հետ նոր ներկի կծուած
իւղի ամեն տեղ տարածուած հոտը:

Մի փողոցում նրա յետևից հասաւ ապրանքակիր կառքերի
մի շարք, որոնք բարձած էին ինչ-որ երկաթեղէնով և այնպէս
սաստիկ դղրդոց էին հանում, որ նրա ականջներն ու գլուխը
սկսեցին ցաւել: Նա արագացրեց քայլերը, ուղեւիով առաջ անց-
նել, բայց յանկարծ երկաթեղէնի դղրդոցի մէջ լսեց իր անունը:
Նա կանգ առաւ և իրանից մի քիչ առաջ տեսաւ սրբնթաց կառքի
մէջ նստած մի սրածայր ու չրեշած բեխերով և լպտտած փայ-
լուն երեսով մի զինուորականի, որ ողջոյնի նշան էր անում
նրան ձեռքով և ժպտում էր, բանալով չափից վեր սպիտակ ա-
տամները:

— Դո՛ւ ես, Նեխիլեղօվ:

Նեխիլեղօվի առաջին զգացածը հաճոյք էր:

—Աս, Շէնքօկ,—ուրախ-ուրախ բացականչեց նա, բայց իսկոյն և եթ հասկացաւ, որ ուրախանալու ոչինչ չը կար:

Այդ նոյն Շէնքօկն էր, որ այն ժամանակ հիւր եկաւ հօ-րաքոյրներէ մօտ: Նեխիլիւղօվը վաղուց նրան աչքից կորցրել էր, բայց լսել էր նրա մասին, որ, չը նայելով պարտքերին, նա զօ-րագնդից դուրս գալով և հեծելագործի պահեստի մէջ մնալով, մի կերպ ինչ-որ միջոցներով կարողանում էր իր դիրքը պահ-պանել հարուստների շրջանում: Նրա ուրախ և գոհ կերպա-րանքը հաստատում էր այդ:

—Ինչ լաւ էր, որ քեզ պատահեցի: Թէ չէ ոչ ոք չը կայ քաղաքում: Բայց պէտք է ասեմ, մեր տղայ, որ ծերացել ես,—անում էր նա կառքից վայր գալով և ուսերը շիտկելով:—Միմիայն քայլուածքիցդ ճանաչեցի քեզ: Հը, այսօր միասին ենք ճաշելու, չէ: Զեղնում ճրտեղ կարելի է կարգին ճաշ ստա-նալ:

—Զը գիտեմ, ժամանակ կ'ունենամ թէ չէ,—պատասխա-նեց Նեխիլիւղօվը, մտածելով միայն այն բանի մասին, որ գլխիցը ցանի ընկերին, առանց նրան վիրաւորելու:—Ինչո՞ւ ես եկել այստեղ,—հարցրեց նա:

—Գործեր ունեմ, սիրելիս: Խնամակալութեան վերաբե-րեալ գործեր: Ախր խնամակալ եմ նշանակուած: Կառավարում եմ Սամանօվի գործերը: Ծանաչում ես, յայտնի հարուստ է: Նա վատնիչ է, իսկ ունի 54 հազար օրավար հող,—ասաց նա մի առանձին հպարտութեամբ, կարծես թէ իր ձեռքի չնորհքն էին այդ բոլոր օրավարները:—Գործերը սաստիկ անփոյթ էին թողուած: Հողը ամբողջապէս մաս-մաս կապալով էր տրուած գիւղացիներին: Նրանք ոչինչ չէին վճարում: 80 հազարից ա-ւելի ապառիկ կար վրաները: Մի տարում ամեն բան փոխեցի և խնամակալութեանը 70% աւելի տուեցի: Հը, ինչ կ'ասես,—հարցրեց նա հպարտութեամբ:

Նեխիլիւղօվը յիշեց, որ լսել էր, թէ ինչպէս այդ Շէնքօկը հէնց այն պատճառով, որ կերել էր իր ամբողջ ստացուածքը և խրուել անվճարելի պարտքերի մէջ, մի առանձին հովանաւո-րութեան չնորհիւ խնամակալ էր նշանակուել մի վատնիչ ծե-րունի հարուստի կարողութեան վրայ և այժմ, ակներևաբար, ապրում էր այդ խնամակալութիւնից ստացած միջոցներով:

«Ի՞նչպէս անեմ, որ օձիքս ազատեմ սրանից, առանց վի-րաւորելու»,—մտածում էր Նեխիլիւղօվը, նայելով նրա լցստած, լիքը երեսին ու ֆիքսատուար քսած բեխերին և լսելով նրա բա-րեհոգի—ընկերական դատարկախօսութիւնը այն բանի մասին, թէ որտեղ կարելի է լաւ ճաշել, և նրա պարծենկոտութիւնը

այն բանի մասին, թէ ինչպէս է ինքը կարգի գցել խնամակալութեան գործերը:

— Դէ ասա տեսնենք, որտեղ ենք ճաշում:

— Ես ժամանակ չունեմ,—ասաց Նեխիլեղովը, նայելով ժամացոյցին:

— Որ այդպէս է, այսպէս կ'անենք: Այս երեկոյ ձիարշաւայ: Կը լինես այնտեղ:

— Չէ, չեմ լինի:

— Եկ այնտեղ: Ես այլ ևս սեփական ձիեր չունեմ: Բայց գրազ եմ բռնում Գրիշայի ձիերի համար: Յիշում ես: Նա լաւ ակոռատուն ունի: Արի ուրեմն, միասին կ'ընթերենք:

— Ընթերել էլ չեմ կարող,— ժպտալով ասաց Նեխիլեղովը:

— Վա, այդպիսի բան կը լինի: Լաւ, հիմա ուր ես գնում: Կ'ուզես քեզ հասցնեմ:

— Փաստաբանի մօտ եմ գնում: Նա շատ մօտ է կենում, այն անկիւնի այն կողմը,— ասաց Նեխիլեղովը:

— Ճիշտ է, դու ինչ որ մի բանով զբաղուած ես բանտում: Բանտային փաստաբան ես դարձել: Կօրչագիւնները ասացին ինձ,— ծիծաղելով ասաց Շէնբօկը:— Նրանք արդէն գնացել են: Ասա տեսնենք, ի՞նչ բան է այդ:

— Ինչ որ ասել են՝ ձիշտ են ասել,— պատասխանեց Նեխիլեղովը,— այստեղ ի՞նչ տեղն է պատմելու:

— Գիտեմ, գիտեմ, դու միշտ մի քիչ տարօրինակ մարդ էիր: Ուրեմն կը գնա ձիարշաւին:

— Չէ, չեմ կարող, և չեմ ուզում գալ: Չը նեղանաս, խնդրեմ:

— Ինչէր ևս ասում, ի՞նչ նեղանալու բան կայ: Հա, դու որտեղ ես կենում,— հարցրեց նա, և յանկարծ նրա դէմքը լըջացաւ, աչքերը կանգ առան, յօնքերը բարձրացան: Նա, ակներևաբար, ուզում էր ինչ-որ մի բան յիշել, և Նեխիլեղովը նկատեց նրա դէմքի վրայ իսկ և իսկ նոյն բութ արտայայտութիւնը, որ ունէր պանդոկի պատուհանի առաջ նստած՝ յօնքերը վեր քաշած ու չրթունքները չռած մարդը:

— Այ թէ ցուրտ է անում, հա:

— Ճիշտ որ շատ ցուրտ է:

— Առած բաներս քո մօտ են,— դիմեց Շէնբօկը կառապանին:

— Ուրեմն մնաս ըարեւ, սաստիկ ուրախ եմ, որ քեզ հանդիպեցի,— ասաց նա Նեխիլեղովին և պինդ սղմելով ձեռքը, թռաւ նստեց կառքը, լպստած երեսի առաջ թափ տալով նոր

ու սպիտակ ձեռնոցով լայն ձեռքը և իր սովորական ժպիտով բանալով չափազանց սպիտակ առամները:

«Միթէ ես էլ այդպէս էի,—մտածում էր Նելսոնը,— շարունակելով ճանապարհը դէպի փաստաբանի բնակարանը:— Այո, թէն դեռ բոլորովին այդպէս չէի, բայց ուզում էի այդպէս լինել և կարծում էի, թէ ամբողջ կեանքս անցնելու եմ այդպէս:

XI

Փաստաբանը հերթից առաջ ընդունեց Նելսոնի դուռը ու իսկոյն և եթ սկսեց խօսել Մենչովների գործի մասին, որ նա արդէն կարդացել էր, և իր վրդովմունքը յայտնեց մեղադրանքի անհիմն լինելու նկատմամբ:

—Վրդովեցուցիչ գործ է,—ասում էր նա:—Շատ հաւանական է, որ ինքը տէրն է կրակ գցել ապահովագրութեան արժէքը ստանալու համար. յամենայն դէպս, Մենչովների մեղաւորութիւնը ամենին ապացուցուած չէ: Ոչ մի փաստ չը կայ նրանց դէմ: Նրանք բանտ են ընկել քննիչի առանձին եռանդի և դատախազի օգնականի անհոգութեան շնորհիւ: Եթէ գործը զաւառում չը վճռուի, այլ այստեղ, ես հաստատ խօսք եմ տալիս տանել և ոչ մի վարձատրութիւն չեմ ուզում: Ինչ վերաբերում է միւս գործին, Ֆէօդօսիա Բիրիւկովայի խնդիրը Բարձրագոյն անունով դրուած պատրաստ է. եթէ գնալու էք Պետերբուրգ, վերցրէք հեռաներդ, ինքներդ տուէք ու խնդրեցէք: Թէ չէ անտեղից այստեղ կը հարցնեն ու ոչինչ դուրս չի գալ: Դուք աշխատեցէք այնպիսի անձանց տեսնել, որոնք ազդեցութիւն ունեն խնդրագիրների յանձնաժողովում: Այս էր բոլորը, չէ՞:

—Չէ, ահա ինձ գրում են բանտից...

—Ինչպէս տեսնում եմ, դուք մի տեսակ աղբիւրի ալ էք դարձել, որտեղից դուրս են բղխում բանտի բոլոր գանգատները,—ժպտալով ասաց փաստաբանը:—Չափազանց շատ գործ կը լինի, գուցէ ուժներդ չը պատի:

—Բայց այս շատ զարմանալի գործ է,—ասաց Նելսոնը,— ու սկսեց կարճառօտ պատմել գործի էությունը:

—Ի՞նչն է ձեզ այդտեղ զարմացնում:

—Ամեն ինչ. ես դեռ հասկանում եմ ուրեաղնիկի արածը, նրան հրամայուած է եղել. բայց մեղադրական թուղթը կադմոզ դատախազի օգնականը չէ՞ որ կրթուած մարդ է...

—Սխալն էլ հէնց դրանում է, որ մենք սովորել ենք կար-

ծել, թէ դատախազները և առհասարակ դատական պաշտօնեաները՝ ինչ-որ նոր, ազատամիտ մարդիկ են։ Մի ժամանակ նրանք ճիշտ որ այդպէս էին, բայց այժմ բոլորովին ուրիշ բան են։ Նրանք այժմ ոչ այլ ինչ են, եթէ ոչ միմիայն ամսի 20-ի *) մասին մտածող աստիճանաւորներ։ Նրանք ոռճիկ են ստանում, նրանց պէտք է որքան կարելի է շատ ոռճիկ, և դրա մէջն են նրանց բոլոր սկզբունքները։ Նրանք ում ուզում էք կը մեղադրեն, կը դատեն, կը դատապարտեն... Ես միշտ ասում եմ պարոն դատաւորներին, — շարունակում էր փաստաբանը, — որ ես չեմ կարողանում առանց երախտագիտական զգացմունքի տեսնել նրանց, որովհետեւ եթէ ես, դուք, մենք բոլորս առհասարակ՝ բանտում չենք, այդ միմիայն նրանց շնորհիւ է. ոչինչ չարժի ապացուցանել, որ մեզնից իւրաքանչիւրը արժանի է առանձին իրաւունքներից զրկուելու և ոչ այնքան հեռաւոր տեղեր աքսորուելու պատժին։

— Բայց եթէ ամեն ինչ կախուած է դատախազի կամայականութիւնից և այն անձերից, որոնք կարող են օրէնքը գործադրել կամ չը գործադրել, էլ ինչո՞ւ համար է դատարանը։

Փաստաբանը ուրախ-ուրախ քրքջաց։

— Շատ թունդ հարցեր էք տալիս։ Այդ արդէն փիլիսոփայութիւն է։ Եթէ ուզում էք՝ կարելի է դրա մասին էլ խօսել։ Այ համեցէք այստեղ շարաթ օրը։ Ինձ մօտ կը հանդիպէք գիտնականների, գրողների, արուեստագէտների։ Այն ժամանակ կը խօսենք ընդհանուր հարցերի մասին, — ասաց փաստաբանը հեղնական ոգեւորութեամբ արտասանելով «ընդհանուր հարցեր» խօսքերը։ — Կնոջս հետ ծանօթ էք։ Համեցէք շարաթ օր։

— Այո, կ'աշխատեմ գալ, — պատասխանեց Նեխլիւզովը, զգալով, որ ինքը սուտ է ասում և ոչ միայն չի աշխատի գալ, այլ, ընդհակառակը, կ'աշխատի չը գտնուել երեկոյեան փաստաբանի տանը՝ նրա մօտ հաւաքուող գիտնականների, գրողների և արուեստագէտների շրջանում։

Այն ծիծաղը, որով փաստաբանը պատասխանեց Նեխլիւզովի այն նկատողութեանը, թէ դատարանը ոչ մի նշանակութիւն չունի, եթէ դատաւորները իրանց քմահաճոյքով կարող են գործադրել կամ չը գործադրել օրէնքը, և այն շեշտը, որով նա արտասանեց «փիլիսոփայութիւն» ու «ընդհանուր հարցեր» խօսքերը, ցոյց տուեցին Նեխլիւզովին, թէ ինչպէս բոլորովին տարբեր կերպով են նայում իրերի վրայ ինքը ու փաստաբանը

*) Ինչպէս յայտնի է, Ռուսաստանում աստիճանաւորները ոռճիկ ստանում են ամսի 20-ին։

և, հաւանականօրէն, նաև փաստաբանի բարեկամները, և թէ ինչպէս ինքը իրան աւելի հեռու է զգում փաստաբանից ու նրա շրջանի մարդկանցից, քան իր նախկին բարեկամներից, օրինակ Շէնքօսից, որոնցից այնքան հեռացել է այժմ:

XII

Բանտը հեռու էր, իսկ ժամանակը՝ ուշ, ուստի Նելսոնը լիւզովը կառք վարձեց բանտը գնալու համար: Մի փողոցով անցնելիս կառապանը, որ միջին տարիքի մարդ էր՝ խելօք ու բարեհոգի դէմքով, զիմեց Նելսոնի հետ, ցոյց տալով նոր շինուող մի ահագին տուն:

— Տեսէ՛ք, ինչ աժդահայ բան են շինել, — ասաց նա, կարծես թէ ինքն էլ մասամբ այդ տունը շինողներիցն էր և պարծենում էր դրանով:

Յիրաւի, ահագին տուն էր՝ ինչ որ բարդ, արտասովոր ու ճոխ: Սոճիի խոշոր գերաններից շինուած ամուր ատաղձապատը, որ փակցուած էր երկաթէ դռերով, շրջապատում էր կառուցուող շէնքը՝ բաժանելով նրան փողոցից փայտէ պատուարով: Ատաղձապատի տախտակամածներով միջիւնների նման գնում-գալիս էին կրաշաղախ բանտորներ, որոնցից ոմանք քար էին տաշում, միւսները՝ պատ գնում, ոմանք էլ կրում էին զէպի վերև ծանր և զէպի ներքև՝ դատարկ կրեւիքներ ու դռներ:

Մի հաստիկ ու գեղեցիկ հագնուած պարոն, երևի ճարտարապետը, ատաղձապատի մօտ կանգնած ու վերևում ինչ որ մի բան ցոյց տալով, խօսում էր կապալառուի հետ, որ ակնաժողովքամբ լսում էր նրան: Դարպասի միջով ճարտարապետի կողքով դուրս էին գալիս դատարկ սայլեր և ներս մտնում բարձած սայլեր:

«Ի՞նչպէս դրանք բոլորն էլ հաւատացած են, և՛ նրանք, որոնք աշխատում են, և՛ նրանք, որոնք բանեցնում են աշխատողներին, թէ այդ այդպէս էլ պէտք է լինի, թէ այն ժամանակ, երբ նրանց կանաչք ուժից վեր աշխատում են տանը և նրանց երեխաները, թասակները գլուխներին, վերահաս սովամահութիւնից առաջ ձերու՜նակերպ ժպտում են, տարուբերելով ճիւղը ոտները, իրանք պէտք է այստեղ շինեն այդ յիմար ու անպէտք տունը ինչ-որ յիմար ու անպէտք մարդու համար», մտածում էր Նելսոնը լիւզովը, նայելով այդ տանը:

— Հա, շատ յիմար տուն է, — ասաց նա բարձրաձայն իր մտացածր:

— Ի՞նչպէս թէ յիմար, — վերաւորուելով ասաց կառապանը:

—Փառք Աստուծու, աշխատանքի դուռ է բաց արել ժողովրդի համար: Ո՞րտեղի յիմար բանն է:

—Բայց չէ որ անպէտք աշխատանք է:

—Անպէտք որ լինէր, չէին շինի,—առարկեց կառապանը,
—ինչքան մարդու հաց է տալիս:

Նեխիլեզօվը լռեց, մանաւանդ այն պատճառով, որ դժուար էր խօսել անիւների դղրդոցի մէջ: Բանտի մօտերքը կառքը սալայատակից անցաւ խճուղու վրայ, այնպէս որ աւելի հեշտ էր խօսել, և կառապանը նորից դիմեց Նեխիլեզօվին.

—Համմա սկսել են քաղաք թափուել այս արհեստաւորները հա՛, —ասաց նա, շուռ գալով դէպի Նեխիլեզօվը և ցոյց տալով մի խումբ գիւղացի գործաւորների վրայ, որոնք, սղոցները, կացինները, կիսամուշտակները ու տոպրակները շալակներին, գալիս էին նրանց հանդէպի կողմից:

—Միթէ այժմ աւելի են գալիս: Քան ատաջուայ տարիները,—հարցրեց Նեխիլեզօվը:

—Ի՛նչ ասել կ'ուզի: Հիմա այնպէս են կիտում քաղաքը, ինչպէս ճանճը մեղրի վրայ: Ամեն տեղ լցուել են: Գործատէրերի համար բանուորը կամ տաշեղը՝ մէկ հաշիւ է, երբ ուզում են՝ դէն են շարտում:

—Ինչիցն է այդպէս եղել:

—Շատացել են: Տեղը քչութիւն է անում:

—Ի՛նչ անենք, որ շատացել են: Ինչո՞ւ չեն մնում գիւղում:

—Գիւղում մնան ինչ անեն: Հող չը կայ:

Նեխիլեզօվը նոյնն էր զգում, ինչ որ լինում է, երբ մարդու մարմնի մի տեղը ցաւացրած է լինում: Թւում է, թէ որ կողմն էլ շուռ ես գալիս՝ կարծես կամաւ ցաւոտ տեղն ես դիպցնում, իսկ այդ այդպէս է թւում միմիայն այն պատճառով, որ ցաւոտ տեղը դիպչելիս է միայն մարդ զգում:

«Միթէ ամեն տեղ նոյնն է», մտածեց նա ու սկսեց հարց ու փորձ անել կառապանին, թէ որքան հող ունի իրանց գիւղը և ինքը կառապանը, և թէ ինչո՞ւ է նա քաղաքում ապրում:

—Մեր գիւղում չունչին մի օրավար հող է գալիս, աղա: Մենք երեք հոգու հող ունենք,—յօժարութեամբ բացատրում էր կառապանը: Մեր տանը հայրս է մնացել ու եղբայրս. միւս եղբօրս զինուոր են տարել: Նրանք են կառավարում ամեն ինչ: Ասենք, կառավարելու բան չը կայ: Եղբայրս էլ ուզում էր Մոսկուա գալ:

—Ձէ կարելի միթէ կապալով հող վերցնել:

—Հիմա ո՞վ հող կը տայ կապալով: Աղաները ունեցած հողերը կերան, փչացրին: Վաճառականները ինչ կայ չը կայ հա-

ւարեցին իրանց բոլի մէջ: Նրանցից առնել չէ կարելի. իրանք են վարուցանքս անել տալիս: Մեզնում մի ֆրանսիացի է առել հողը աղայից: Ինչ անում ենք՝ կապալով չէ տալիս:

— Ի՞նչ ֆրանսիացի:

— Դիւֆար է անունը, գուցէ լսած լինէք: Մեծ թատրոնում դերասանուհիների համար կեղծծամեր է շինում: Շահաւէտ գործ է, հարստացել է: Մեր աղջիկաբոնից ամբողջ կալուածը առաւ ու հիմա նա է մեր տէրը: Որ կողմն ուզում է, դէնն էլ քշում է մեզ: Փառք Աստուծու, որ լաւ մարդ է: Միայն թէ կինը, որ մեր ուսաններից է, կապովի շուն լինի կարծես: Գըռփում է ժողովուրդին: Հոգիները հանում է... Ահա և բանտը: Ո՞ւր էք ուզում, որ տանեմ ձեզ. դռան մօտ էս ասեմ՝ չեն թողնում:

XIII

Սրտատրոսի և լի երկիւղով այն մտածմունքից, թէ ինչ դրութեան մէջ կը գտնի այսօր Մասլովային, և այն գաղտնիքից, որ կազմում էին նրա համար թէ Մասլովան և թէ բանտում եղող մարդկանց բազմութիւնը, Նեխիլեզովը քաշեց գլխաւոր մտաքի զանգը և, երբ վերակացուն դուրս եկաւ, հարցրեց նրանից Մասլովայի մասին: Վերակացուն տեղեկացաւ ու ասաց որ նա հիւանդանոցումն է: Նեխիլեզովը գնաց հիւանդանոց: Հիւանդանոցի պահապանը, որ մի բարեհոգի ծերուկ էր, իսկոյն և եթ ներս թողեց նրան և, իմանալով, թէ ում է ուզում տեսնել, ուղղեց նրան երեխաների բաժանմունքը:

Երիտասարդ բժիշկը, որ ամբողջապէս տոգորուած էր կարբօլեան թթւութեամբ, գուրն եկաւ միջանոցը և խիստ կերպով հարցրեց Նեխիլեզովից, թէ ինչ է ուզում նա: Այդ բժիշկը միշտ կատարում էր կալանաւորների խնդիրքը, ուստի և շարունակ անախորժ ընդհարումներ էր ունենում բանտային վարչութեան և նոյն իսկ գլխաւոր բժշկի հետ: Վախենալով, թէ մի գուցէ Նեխիլեզովը որևէ ապօրինի բան խնդրի իրանից, և, բացի այդ, ուզելով ցոյց տալ, որ ինքը ոչ ոքի համար բացառութիւն չէ անում, նա բարկացած ձևացաւ:

— Այստեղ կանաչք չը կան, այս երեխաների բաժանմունքն է, — ասաց նա:

— Ես գիտեմ այդ, բայց այստեղ կայ բանտից տեղափոխուած մի հիւանդապահ աղախին:

— Այո, երկուսը կան այստեղ: Բայց ի՞նչ էք ուզում:

— Ես մօտիկ մարդ եմ նրանցից մէկին, Մասլովային, — ասաց Նեխլիւզովը, — և ուզում եմ տեսնել նրան. գնում եմ Պետերբուրգ նրա գործի համար վճռալինջ գանգատ տալու: Բացի այդ, ուզում էի նրան տալ այս բանը: Ոչինչ չը կայ մէջը, միայն մի լուսանկար պատկեր է, — ասաց Նեխլիւզովը, գրպանից հանելով մի ծրար:

— Ինչու չէ, այդ կարելի է, — ասաց բժիշկը մեղմանալով և, դիմելով մի սպիտակ գոգնոցաւոր պառաւ կնոջ, պատուիրեց կանչել հիւանդապահ կալանաւորուհի Մասլովային: — Չէք ուզի նստել կամ մտնել ընդունարանը:

— Շնորհակալ եմ, — ասաց Նեխլիւզովը և, օգտուելով բժշկի մէջ կատարուած իր համար բարենպաստ փոփոխութիւնից, հարցրեց, թէ արդեօք գոհ են հիւանդանոցում Մասլովայից:

— Ոչինչ, վատ չէ աշխատում, մանաւանդ եթէ նկատի առնենք այն պայմանները, որոնց մէջ նա ապրել է, — պատասխանեց բժիշկը, — բայց ահա և ինքը:

Մի դռան մէջից դուռ եկաւ պառաւ հիւանդապահը ու նրա յետեից Մասլովան: Նա շերտաւոր շրջադեցատով էր ու սպիտակ գոգնոցով. գլխին շոր էր կապած, որ ծածկում էր մազերը: Նեխլիւզովին տեսնելով, նա կարմրեց, կանգ առաւ՝ կարծես անվճռակամութեան մէջ ու յետոյ խոժոռուեց և, աչքերը կախ գցելով, արագ քայլերով գնաց դէպի նա՝ միջանցքում փռած փալասի վրայով: Մօտենալով Նեխլիւզովին, նա առաջ չէր ուզում ձեռք տալ նրան, յետոյ տուեց ձեռքը ու աւելի ևս կարմրեց: Նեխլիւզովը նրան չէր տեսել այն խօսակցութիւնից յետոյ, որի ժամանակ նա ներողութիւն էր խնդրել, որ տաքացել էր, և կարծում էր, թէ նրան կը գտնի այնպէս, ինչպէս նա այն ժամանակն էր: Բայց այսօր նա բոլորովին ուրիշ տեսակ էր և նրա դէմքի արտայայտութեան մէջ ինչ-որ նոր բան կար, զուսպ, ամօթխած ու, ինչպէս Նեխլիւզովին թուաց, չարակամ դէպի ինքը: Նա նրան էլ նոյնը ասաց, ինչ որ բժշկին, — թէ գնում է Պետերբուրգ, — և տուեց Պանօլօյից բերած լուսանկարը:

— Պանօլօյումը դտայ, վաղուցուայ լուսանկար է, գուցէ ձեզ հաճոյք պատճառի: Վերցրէք:

Մասլովան, վեր քաշելով սև յծնքերը, զարմացած նայեց նրան իր շիւ աչքերով, կարծես հարցնելով, թէ ինչի համար է այդ: Եւ լուռ վերցրեց ծրարը ու խրեց գոգնոցի յետեր:

— Ես այնտեղ տեսայ ձեր մօրաքրոջը, — ասաց Նեխլիւզովը:

— Տեսաք հա, — ասաց Մասլովան անտարբեր կերպով:

— Լաւ է այստեղ ձեզ համար, — հարցրեց Նեխլիւզովը:

- Ոչինչ, լաւ է, — ասաց Մասլովան։
- Շատ դժուար հօ չէ։
- Ձէ, ոչինչ։ Դեռ չեմ ընտելացել։
- Ես շատ ուրախ եմ, որ ձեզ այստեղ են փոխադրել, Ինչ-
քան չը լինի, այնտեղից լաւ է։
- Ռոսեդից լաւ է, — հարցրեց Մասլովան, կարմրելով։
- Բանտից, — շտապեց ասել Նեխիլեզովը։
- Ինչո՞վ է լաւ, — հարցրեց Մասլովան։
- Կարծում եմ, որ այստեղի մարդիկը աւելի լաւ են, Այն-
պէս չեն, ինչպէս այնտեղի մարդիկը։
- Այնտեղ լաւ մարդիկ շատ կան, — ասաց Մասլովան։
- Մենշովիկների համար խօսեցի և յոյս ունեմ, որ նրանց
կ'ազատեն, — ասաց Նեխիլեզովը։
- Տայ Աստուած, շատ հիանալի պառաւ է, — ասաց Մաս-
լովան, կրկնելով այն ընորոշումը, որ ինքը արել էր պառաւի
վերաբերմամբ, և թեթեւ ժպտալով։
- Ես այսօր գնում եմ Պետերբուրգ։ Ձեր գործը շուտով
կը քննուի սենատում. յոյս ունեմ, որ դատավճիռը կը ջնջեն։
- Ջնջեն չը ջնջեն, այժմ ինձ համար մէկ է, — ասաց Մաս-
լովան։
- Ինչո՞ւ այժմ։
- Այնպէս, — ասաց Մասլովան հարևանի ու հարցական
հայեացք գցելով նրա վրայ։
- Նեխիլեզովը այդ խօսքը և այդ հայեացքը այն մտքով հաս-
կացաւ, թէ նա ուզում է իմանալ, արդեօք ինքը հաստատ է
մնում իր վճռին, թէ՞ ընդունել է նրա մերժումը ու փոխել է
վճիռը։
- Ձը գիտեմ՝ ինչու է միևնոյն բանը ձեզ համար, — ասաց
նա։ — Բայց ինձ համար ճիշտ որ մէկ է, կ'արդարացնեն ձեզ թէ
ոչ։ Ինչ էլ լինի, ես պատրաստ եմ անել այն, ինչ որ ասացի
այն օրը, — ասաց նա վճռաբար։
- Մասլովան բարձրացրեց գլուխը, և նրա սև ու շիւ աչքերը
կանգ առան Նեխիլեզովի դէմքի վրայ, միևնոյն ժամանակ նայե-
լով նրա կողքով, ու ամբողջ երեսահարքը փայլեց ուրախու-
թիւնից։ Բայց նա բոլորովին ուրիշ բան ասաց, քան այն, ինչ
որ արտայայտում էին նրա աչքերը։
- Զուր բան էք ասում, — ասաց նա։
- Ասում եմ, որ դուք իմանաք։
- Այդ բանի մասին արդէն ամեն ինչ ասել էք ու էլ ա-
սելու ոչինչ չի մնացել, — ասաց Մասլովան, դժուարութեամբ
պահնելով ժպիտը։

Հիւանդասենեակից ինչ որ աղմուկ եկաւ: Մանկական լաց լսուեց:

— Կարծեմ ինձ կանչում են, — ասաց Մասլովան, անհանգստաբար յետ-յետ նայելով.

— Մնաք բարեւ, ուրեմն, — ասաց Նեխիլուզով:

Մասլովան այնպէս ձեռքերէն թէ չի նկատում Նեխիլուզովի դէպի ինքը մեկնած ձեռքը և, ձեռք չը տալով, շուտ եկաւ ու, աշխատելով ծածկել իր ցնծութիւնը, արագ քայլերով հեռացաւ միջանցքի փախսի վրայով:

«Ի՞նչ է կատարւում այդ կնոջ հոգու մէջ: Ի՞նչպէս է նա մտածում: Ի՞նչպէս է զգում: Ուզում է արդեօք փորձել ինձ, թէ յիշաւի չի կարողանում ներել: Արդեօք չի կարողանում ասել այն բոլորը, ինչ որ մտածում ու զգում է, թէ չի ուզում ասել: Մեղմացել է արդեօք, թէ աւելի զայրացել», — հարցնում էր ինքն իրան Նեխիլուզովը ու չէր կարողանում պատասխան տալ: Մի բան նա հաստատ գիտէր, — այն, որ նա փոխուել է, որ նրա մէջ կատարւում է նրա հոգու համար կարեւոր փոփոխութիւն և որ այդ փոփոխութիւնը միացնում է իրան, Նեխիլուզովին, ոչ միայն նրա հետ, այլ և Տիրոջ հետ, Որի անունով էր կատարւում այդ փոփոխութիւնը: Եւ այդ միացումն էր նրա բերկրալից ու գորովալից տրամադրութեան պատճառը:

Վերադառնալով հիւանդասենեակը, ուր դրուած էին ութ մանկական մահճակալներ, Մասլովան, գթութեան քրոջ հրամանով, սկսեց փոխել անկողինը և, սաւանը ձեռքին շատ հեռու կռանալով, սայթաքեց ու քիչ մնաց վայր ընկնի: Հիւանդներից մէկը, վիզը կապած մի տղայ, որ արդէն լաւանում էր, ծիծաղեց, և Մասլովան, այլ ևս չը կարողանալով զսպել իրան, նստեց մահճակալի վրայ, փռթկացրեց ու սկսեց այնպէս բարձրաձայն ու վարակիչ կերպով ծիծաղել, որ երեխաներից մի քանիսն էլ սկսեցին քրքշալ, իսկ գթութեան քոյրը գոռաց նրա վրայ.

— Ի՞նչ ես կ'չկչում: Կարծում ես, էլի առաջուան տեղումն ես: Գնա, կերակուրները բեր:

Մասլովան լռեց և, ամանները վերցնելով, գնաց կերակուր բերելու, բայց յետ նայելով վիզը կապած տղային, որին արգելուած էր ծիծաղել, նորից փռթկացրեց: Ամբողջ օրը, հէնց որ մենակ էր մնում, լուսանկարը դուրս էր քաշում ծրարի մէջից և հիանում վրան, բայց միայն երեկոյեան, երբ հերթապահութիւնը վերջացրեց ու մենակ մնաց այն սենեակում, ուր քնում էին ինքն ու միւս հիւանդապահ կինը, նա բոլորովին հաւնեց պատկերը ծրարից և երկար ժամանակ անշարժ նստած, աչքերով զգուշելով ամենաչնչին մանրամասները և դէմքերի, և

հազուադէպի, և՛ պատշաճմբի աստիճանների, և՛ այն թիւերի, որոնք նկարահմբ էին կազմում իր, Նեխիւղօվի ու հօրաքոյրների կերպարանքների համար, նայում էր խունացած, դեղնած պատկերին և չէր կշտանում դիտելով մանաւանդ իր նկարը, իր ջանէլ, սիրուն և զանգրապատ ճակատով դէմքը: Նա այնքան տարուել էր այդպէս դիտելով, որ չը նկատեց իր ընկերունի հիւանդապահի ներս մտնելը:

— Սյդ ի՛նչ բան է: Նա տուեց, — հարցրեց հաստիկ ու բարեհոգի հիւանդապահունին, կռանալով լուսանկարի վրայ: — Միթէ այդ դու ես:

— Հապա ո՞վ պէտք է լինի, — ասաց Մաւլօվան, ժպտերես նայելով իր ընկերունու դէմքին:

— Իսկ այս մէկն ո՞վ է: Նա է: Իսկ սա, մայրն է:

— Հօրաքոյրն է: Որ ես չասէի, ինձ չէիք ճանաչի, — հարցրեց Մաւլօվան:

— Ո՞րտեղից պէտք է ճանաչէի: Որ մեռնէի էլ չէի ճանաչի: Բոլորովին ուրիշ դէմք է: Մի տասը տարի հօ անցած կը լինի այն ժամանակից, չէ:

— Բանը տարիներումը չէ, այլ իմ վարած կեանքում, — ասաց Մաւլօվան, և յանկարծ նրա ամբողջ զուարթութիւնը չքացաւ: Դէմքը վնաստ արտայայտութիւն ստացաւ և յօնքերի արանքին կնճիռ երևաց:

— Քո կեանքիդ էլ թեթե՛ւ էլ ի՛նչ պէտք է լինէր:

— Ի՛նչպէս չէ, շատ թեթեւ էր, — կրկնեց նրա խօսքը Մաւլօվան, աչքերը խփելով ու գլուխը թափ տալով: — Տաժանակիր աշխատանքներից էլ վատ էր:

— Ինչո՞վ էր վատ:

— Ինչո՞վ պէտք է լինի: Երեկոյեան ժամի 8-ից մինչև առաւօտուայ 4-ը: Եւ ամեն օր:

— Հապա ինչո՞ւ չեն թողնում, հեռանում:

— Շատ էլ ուզում են հեռանալ, բայց չեն կարող: Է՛հ, չարժի խօսել, — բացականչեց Մաւլօվան, վեր թռաւ տեղից, լուսանկարը շարտեց սեղանի աչքը և, հազիւ հազ պահելով չարացած արցունքները, դուրս վազեց միջանցքը, դուռը պինդ խփելով յետևից, Լուսանկարին նայելիս նա զգում էր իրան այնպէս, ինչպէս դուրս էր բերուած այնտեղ, յիշում էր, թէ որքան երջանիկ էր այն ժամանակ ինքը նրա հետ, և երազում էր, թէ դեռ կարող էր նոյնպէս երջանիկ լինել: Ընկերունու խօսքերը յիշեցրին նրան, թէ ինչ էր ինքը այժմ, նրա միտքը բերեցին իր վարած կեանքի ամբողջ սարսափելիութիւնը, որ ինքը անորոշ կերպով զգում էր այն ժամանակ, բայց թոյլ չէր տալիս

ինքն իրան որոշ գիտակցել: Միայն այժմ վառ կերպով յիշեց նա այն բոլոր սոսկալի գիշերները և մանաւանդ մի բարեկենդանի գիշեր, երբ ինքը սպասում էր մի ուսանողի, որ խոստացել էր փող տալ անառակատան տիրուհուն ու ազատել նրան: Յիշեց, թէ ինչպէս ինքը կիսաբաց ու գինտուած կարմիր մետաքսէ հագուստով և խճճուած մազերը զարդարող կարմիր հանգոյցով, յոգնած, ուժասպառ ու հարբած, գիշերուայ ժամի երկուսի մօտ ճանապարհ դրեց այցելուններին և պարերի ընդմիջման ժամանակ նստեց ջութակահարին նուագակցող նիհար, ոսկրոտ ու պզուկոտ դաշնակահարուհու կողքին ու սկսեց գանգատուել իր ծանր վիճակի մասին, և թէ ինչպէս այդ նուագակցունին նոյնպէս ասում էր, որ ինքն էլ ճնշուած է իր վիճակից և ուզում է փոխել դրութիւնը, և թէ ինչպէս մօտեցաւ նրանց իր ընկերունի կլարան և իրանք երեքով յանկարծ վճռեցին թողնել այդ կեանքը: Նրանք ուզում էին արդէն գնալ իրանց սենեակները, երբ յանկարծ հարբած այցելուների աղմուկ լսուեց: Զութակահարը բիտուրնէլ ածեց, դաշնակահարուհին դողացրեց քաղցրիկ առաջին ձևի համար ռուս ժողովրդական, մի ուրախ երգի նուագակցութիւն, գինի հոտող ու զկուտացող մի հարբած մարդուկ, սպիտակ փողպատով և ֆրակով, որ նա հանեց երկրորդ ձևի ժամանակ, գրկեց նրան, իսկ միւս այցելուն, որ մի հաստիկ ու միրուքաւոր մարդ էր, նոյնպէս ֆրակով (նրանք ինչ որ պարահանդէսից էին եկել) գրկեց կլարային, և նրանք երկար ժամանակ պտոյտ-պտոյտ էին գալիս, պարում էին, գոռգոռում էին ու խմում... Եւ այդպէս շարունակ մի տարի, երկու տարի, երեք տարի: Էլ ինչպէս չը փոխուէր: Եւ այդ բոլորի պատճառը Նեխիլեդօվն էր: Եւ նրա մէջ յանկարծ նորից զարթնեց առաջուան զայրոյթը դէպի Նեխիլեդօվը, ցանկութիւն հայնոյել, նախատել նրան: Նա ափսոսում էր, որ այսօր դէպքից չէր օգտուել մի անգամ ևս նրան ասելու, որ ինքը ճանաչում է նրան ու չի խաբուի նրանից, թոյլ չի տալ նրան շահագործել իրան հոգեպէս, ինչպէս շահագործել էր մարմնապէս, թոյլ չի տալ նրան իրան դարձնել նրա մեծահոգութեան առարկան: Եւ մի կերպ հանգցնելու համար դէպի ինքը զգացած կարեկցութեան և Նեխիլեդօվին ուղղուած ապարդիւն նախատինքի կսկիծը, նա ուզեց գինի խմել: Եւ նա չէր պահի խօսքը ու գինի կը խմէր, եթէ բանտում լինէր: Բայց այդտեղ գինի կարելի էր գտնել միմիայն ֆէլդշերի մօտ, իսկ ֆէլդշերից նա վախենում էր, որովհետև նա հետամուտ էր լինում իրան: Տղամարդկանց հետ որ և է յարաբերութիւն ունենալը այժմ զգուշիկ էր Մասլօվային: Մի քիչ միջանցքի նստարանի վրայ նստելուց

յետոյ, նա վերագարձաւ իրանց սննեակը և, ընկերուհու հարցերին պատասխան չը տալով, երկար ժամանակ լալիս էր իր սևացրած կեանքի վրայ:

XIV

Պետերբուրգում Նեխլիւզովը չորս գործ ունէր,—Մասլովայի վճռաջինջ խնդիրը՝ սննատոււմ, Ֆեդոսեա Բիրիւկովայի գործը՝ խնդրագիրների յանձնաժողովում, Վերա Բոգոդուխովսկայի յանձնարարած գործը ժանդարմային վարչութեան մէջ Շուստովայի ազատման մասին և մի գործ մի մօր տեսակցութեան մասին ամբողջում պահուող իր որդու հետ, որի մասին տոմսակ էր գրել նրան նոյն Վերա Բոգոդուխովսկայան:

Մասլեննիկովին վերջին անգամ արած այցելութիւնից և մանաւանդ գիւղը դնալուց յետոյ Նեխլիւզովը իր ամբողջ էութեամբ զգուանք զգաց դէպի այն միջավայրը, որի մէջ ապրում էր ինքը մինչև այժմ, դէպի այն միջավայրը, ուր, նրա կարծիքով, այնքան մեծ ջանքով էին ծածկում այն տանջանքները, որ միլիոնաւոր մարդիկ կրում են փոքրութիւ մարդկանց յարմարութիւնները ու զուարճութիւնները ապահովեցնելու համար, որ այդ միջավայրի մարդիկ չեն տեսնում ու չեն կարող տեսնել այդ տանջանքները, ուստի նաև իրանց կեանքի անգթութիւնը ու յանցաւորութիւնը Նեխլիւզովը այժմ այլ ևս չէր կարող յարաբերութիւն ունենալ այդ միջավայրի մարդկանց հետ առանց ամաչելու և ինքն իրան յանդիմանելու: Եւ սակայն նրան դէպի այդ միջավայրն էին զրաւում նրա անցեալ կեանքի սովորոյթները, ազգականական ու բարեկամական յարաբերութիւնները, և գլխաւորապէս այն, որ այժմ նրան զբաղեցնող միակ բանը անելու համար, այն է՝ Մասլովային և միւս բոլոր անմեղ տանջուողներին օգնելու համար, նա պարտական էր աջակցութիւն ու ծառայութիւններ խնդրել այդ միջավայրի մարդկանցից, որոնց ոչ միայն նա չէր յարգում, այլ յաճախ վերաբերում էր վրդովմունքով և արհամարհանքով:

Պետերբուրգ հասնելով և իջնելով իր մօրաբրոջ, Նախկին մինիստր կոմս Չարսկիյի կնոջ մօտ, Նեխլիւզովը միանգամից ընկաւ այժմ իր համար այնքան խորթացած արխատօկրատ չըջանի ուղղակի կենտրոնը: Նրան անախորժ էր այդ բանը, բայց նա չէր կարող ուրիշ կերպ վարուել: Եթէ մօրաբրոջ մօտ չիջնէր, այլ հիւրանոցում, զբանով կը վերաւորէր նրան: Բացի այդ, մօրաբրոյրը մեծ կապեր ունէր և կարող էր վերին աստիճանի

օգտակար լինել նրան այն բոլոր գործերում, որոնց մասին նա պէտք է աշխատէր:

—Այս ինչեր եմ լսում քո մասին: Ինչ որ տարօրինակ բաներ,—ասում էր նրան կոմսուհի Եկատերինա Իվանովնան, զաւուն պէս սուրճ տալով նրան խմելու:—Vous posez pour un Howard *)։ Օգնում ես յանցաւորներին: Այցելում ես բանտերը: Դարձի ես բերում:

—Ինչեր էք ասում, ամենեւին մտքովս էլ չի անցնում այդ:

—Ինչո՞ւ, լաւ բան է այդ: Միայն թէ, ասում են, մէջը ինչ—որ սիրային պատմութիւն կայ: Պատմիր տեսնենք:

Նեխիլիզովը պատմեց իր ու Մասլովայի մէջ պատահածը, բոլորը ինչպէս որ եղել էր:

—Յիշում եմ, յիշում, խեղճ էլէնը ինչ որ պատմում էր ինձ այն ժամանակ, երբ դու այն պառաւնների մօտ էիր ապրում**), նրանք կարծեմ քեզ ուզում էին պսակել իրանց ձեռնասուն աղջկայ հետ (կոմսուհի Եկատերինա Իվանովնան միշտ արհամարհանքով էր վերաբերում Նեխիլիզովի հօրաքոյրներին)... Ուրեմն նա է այդ: Elle est encore jolie? (Դեռ սիրուն է նա):

Եկատերինա Իվանովնա մօրաքոյրը մի 60 տարեկան առողջատես, ուրախ, եռանդուն ու շատախօս կին էր: Նա բարձրահասակ էր, շատ գէր, և շրթունքի վրայ սև բեխեր էին նըշմարւում: Նեխիլիզովը սիրում էր նրան և կրեխայութեան ժամանակից սովոր էր վարակուել նրա եռանդից և ուրախութիւնից:

—Չէ, ma tante (մօրքոյր), այդ բոլորը վերջացել պրծել է: Ես միայն ուզում էի օգնել նրան, որովհետեւ նա անմեղ տեղն է դատապարտուած, և ես մեղաւոր եմ այդ բանում, ինչպէս և առհասարակ նրանում, որ նա այդպիսի վիճակի մէջ է ընկել: Ես ինձ պարտաւոր եմ զգում անել նրա համար ինչ որ կարող եմ...

—Հապա ինչո՞ւ էին ասում, թէ ուզում ես պսակուել հետը:

—Ես իսկապէս ուզում էի, բայց նա չէ ուզում:

Եկատերինա Իվանովնան, դուրս պրծացնելով ձակատը և

*) «Հօռարդ էք ձևանում» (Ֆրանսերէն «դուք» են ասում նոյն իսկ այն դէպքերում, երբ ռուսերէն խօսելիս «դու» են ասում): Հօռարդ (18-րդ դարում) հոչակաւոր բանտադէտ էր և մեծ մարդասէր: Ե. Բ.

**) Խօսքը Նեխիլիզովի հօրաքոյրների մասին է, որ մենք սխալմամբ մինչև այժմ մօրաքոյր ենք թարգմանել, ռուսերէն Тётя բառի անորոշութեան շնորհիւ: Ե. Բ.

քաշ գցելով աչքերի բիբերը, զարմացած ու լուռ նայեց իր քրորդու վրայ: Յանկարծ նրա դէմքը փոխուեց, զուարճութեամբ արտայայտութիւն ստանալով:

— Պէտք է ասել, որ նա քեզնից խելօք է: Ի՞նչ յիմարն ես եղել դու: Եւ դու կը պսակուէիր նրա հետ:

— Անպատճառ:

— Այնպիսի կին լինելուց յետոյ:

— Եւս ասելի: Չէ որ ես եմ եղել այդ բոլորի պատճառը:

— Չէ, դու ուղղակի դմբօ մարդ ես եղել, — ասաց մօրաքոյրը, զսպելով ժպիտը: — Սարսափելի դմբօ մարդ, բայց ես քեզ հէնց նրա համար եմ սիրում, որ դու այդպիսի սարսափելի դմբօ մարդ ես, — կրկնում էր նա, ըստ երևոյթին առանձնապէս հաւանելով այդ խօսքը, որ, նրա կարծիքով, ճիշտ էր արտայայտում իր քրորդու մտաւոր և բարոյական վիճակը: — Գիտես, որքան ի դէպ է այդ, — շարունակում էր նա: — Aline-ը հիանալի Մագիթաղինեան ապաստարան ունի: Ես միանգամ եղել եմ այնտեղ: Այն տեղի կանայք սաստիկ զգուշիկ են: Յետոյ մի գլուխ լուացւում էի: Բայց Aline corps et âme (հոգով մարմնով) զբաղւած է այդ գործով: Այդ քո ասածին էլ կը տանք նրա ապաստարանը: Եթէ նրան ուղղելու ճար կայ, Aline-ից լաւ ոչ ոք չի ուղղի:

— Բայց նա դատապարտուած է տաժանակիր աշխատանքներին: Ես հէնց նրա համար եմ եկել, որ աշխատեմ փոխել տալ այդ վճիռը: Այդ առաջինն է այն գործերից, որ ես ունեմ ձեզ մօտ:

— Օհօ: Ո՞րտեղ է նրա գործը:

— Սենատում:

— Սենատում: Իմ սիրելի cousin Լեօփուշկան սենատումն է: Բայց նա հէրօլդիայի բաժանմունքումն է: Իսկ իսկականներից ոչ ոքի չեմ ճանաչում: Աստուած գիտի, թէ ովքեր են, — կամ գերմանացիներ՝ Գէ, Ֆէ, Դէ — tout l'alphabet (ամբողջ այբբենարանը), կամ զանազան Իվանօվներ, Սեմեօնօվներ, Նիկիտիններ, կամ Իվանենկօ, Սիմօնենկօ, Նիկիտենկօ, pour varier (փոփոխութիւն գցելու համար): Des gens de l'autre monde (ուրիշ տեսակ մարդիկ): Բայց այնուամենայնիւ ես կ'ասեմ ամուսնուտ: Նա ծանօթ է հետները: Նա ամեն տեսակ մարդկանց հետ ծանօթութիւն ունի: Ես իրան կ'ասեմ: Իսկ դու բացատրիր, թէ ինչու՞մ է բանը, ապա թէ ոչ նա երբէք իմ ասածս չէ հասկանում: Ինչ որ ասում եմ, ասում է, թէ ոչինչ չէ հասկանում: C'est un parti pris (գիտամար է անում): Ամենքը հասկանում են, միայն նա է, որ չէ հասկանում:

Այդ ժամանակ գիւլպայաւոր լաքէյը արծաթէ մատուցա-
րանի վրայ մի նամակ բերեց:

— Հէնց Aline-իցն է: Այ, ի դէպ, Կիզէվէտտէրին էլ կը
լսես:

— Ի՞նչ Կիզէվէտտէր է այդ:

— Կիզէվէտտէրը: Այ այսօր արի ու կ'իմանաս, թէ ով է:
Նա այնպէս է խօսում, որ ամենարիւտ չարագործները ծունկ
են չղքում և լալիս են ու զղջում:

Կոմսուհի Եկատերինա Իվանովնան, — որքան էլ այդ տա-
րօրինակ էր և որքան քիչ էր յարմարում նրա բնաւորութեանը,
— ջերմ կուսակից էր այն վարդապետութեան, որի համաձայն՝
քրիստոնէութեան էութիւնը կայանում է քաւութեանը հաւատա-
լու մէջ: Նա այցելում էր այն ժողովները, ուր քարոզում էր
այն ժամանակ մօդա ընկած այդ վարդապետութիւնը, և ժողովե-
րի էր հրաւիրում իր մօտ հաւատացեալներին: Չը նայելով որ
այդ վարդապետութիւնը հերքում էր ոչ միայն բոլոր ծէսերը ու
սրբերի պատկերները, այլ և եկեղեցու խորհուրդները, կոմսու-
հի Եկատերինա Իվանովնայի բոլոր սենեակներում և նոյն իսկ
նրա մահճակալի գլխավերում սրբերի պատկերներ էին կախ
տուած, և նա կատարում էր եկեղեցու պահանջած բոլոր ծէ-
սերը, ոչ մի հակասութիւն չը տեսնելով դրա մէջ:

— Այ եթէ քո Մագլթաղինէն լսէր նրա քարոզը, իսկոյն և
եթ դարձի կը գար, — ասաց կոմսուհին: — Իսկ դու անպատճառ
տանը եղիր այս երեկոյ: Կը լսես նրան: Չարմանալի մարդ է:

— Այդ ինձ համար հետաքրքրական չէ, ma tante.

— Իսկ ես քեզ ասում եմ, որ հետաքրքրական է: Անպատ-
ճառ արի: Դէ ասա տեսներ էլ ինչ ես ուզում ինձանից:
Videz votre sac (տուրակդ թափ տուր):

— Մի գործ էլ կայ ամրոցում:

— Ամրոցում: Այդ հեշտ է, տոմսակ կը տամ քեզ բարձն
Կրիզամուտի անունով: C'est un très brave homme (հիմնալի
մարդ է): Ասենք, դու ինքդ էլ ճանաչում ես նրան: Նա քո հօր
ընկերն է: Il donne dans le spiritisme (գրաւում է սպիրիտիզ-
մով): Սակայն այդ ոչինչ: Նա շատ բարի է: Ի՞նչ գործ ունես
ամրոցում:

— Պէտք է խնդրեմ, որ թոյլ տան մի կնոջ տեսնուել իր
որդու հետ, որ բռնուած է այնտեղ: Բայց ինձ ասացին, որ
այդ Կրիզամուտից չի կախուած, այլ Չերվեանսկից:

— Չերվեանսկիին ես չեմ սիրում, բայց ոչինչ, նա Ma-
riette-ի ամուսինն է: Կարելի է Mariette-ին խնդրել: Նա ինձ

համար կ'անի այդ բանը: Elle est très gentille (նա շատ համակրելի է):

—Պէտք է մի ուրիշ կնոջ համար էլ խնդրեմ: Մի քանի ամիս է ինչ բռնուած է, բայց ոչ որ չը գիտի, թէ ինչու է

—Ասում ես էլի.—ինքը անշուշտ լաւ գիտի, թէ ինչու է բռնուած: Նրանք միշտ շատ լաւ են խմանում: Եւ տեղն է նրանց, այդ խուզուածներին:

—Ձը գիտեմ՝ տեղն է թէ չէ: Բայց հաստատ է, որ նրանք տանջուում են: Դուք քրիստոնեայ էք ու հաւատում էք Աւետարանին և սակայն այդպէս անգութ էք...

—Ի՞նչ դարմանալու բան կայ այդտեղ: Աւետարանը՝ Աւետարան էլ կը մնայ, իսկ ինչ որ դարչելի է՝ դարչելի է: Աւելի վատ կը լինի, եթէ ես կեղծեմ ու ասեմ, թէ սիրում եմ նիհիլիստներին, մանաւանդ խուզուած նիհիլիստոհիներին, մինչդեռ ես նրանց տանել չեմ կարողանում:

—Ինչո՞ւ չէք կարողանում տանել նրանց:

—Ինչո՞ւ են խռնուում այնպիսի բաների մէջ, որ իրանց գործը չէ: Այդ՝ կանացի գործ չէ:

—Հապա ինչո՞ւ դէմ չէք, որ Mariette-ը պարապում է գործերով,—ասաց Նեխիլեզովը:

—Mariette-ը՞: Mariette-ը՝ Mariette է: Իսկ դրանք՝ Աստուած գիտէ՝ թէ ովքեր են,—մի որ և է խալաիպիկնա ուղում է խելք սովորեցնել ամենքին:

—Խելք սովորեցնելու բան չը կայ, ուղղակի ուղում են օգնել ժողովրդին:

—Առանց նրանց էլ լաւ գիտեն, թէ ում պէտք է օգնել և ում պէտք չէ օգնել:

—Բայց չէ՞ որ ժողովուրդը տառապում է: Այ ևս հէնց այժմ գիւղիցն եմ գալիս: Մի՞թէ լաւ բան է, որ գիւղացիները ուժից վեր աշխատում են ու կուշտ չեն ուտում, իսկ մենք ապրում ենք սարսափելի չռայլ կերպով,—ասում էր Նեխիլեզովը, մօրաքրոջ բարեհոգութեան շնորհիւ ակամայ ցանկութիւն զգալով յայտնել նրան այն բոլորը, ինչ որ ինքը մտածում էր:

—Իսկ քո ասածդ ի՞նչ է,—որ ես աշխատեմ ու ոչինչ չուտեմ:

—Ձէ, ես չեմ ուղում, որ դուք սոված մնաք,—ակամայ ժպտալով ասաց Նեխիլեզովը,—այլ ուղում եմ, որ բոլորս էլ աշխատենք և բոլորս էլ ուտենք:

Մօրաքրոջը, նորից քաշ գցելով ճակատն և բիւբերը, հետաքրքրութեամբ յառեց հայեացքը նրա վրայ:

—Mon cher, vous finirez mal (վերջդ վատ կը լինի, սիրելիս)—ասաց նա:

—Ինչո՞ւ պէտք է վատ լինի:

Այդ ժամանակ ներս մտաւ մի բարձրահասակ ու լայնաթիկունք գեներալ: Չարսկայա կոմսուհու ամուսինն էր այդ պաշտօնաթող մինիստր:

—Ան, բարեւ, Դմիտրիյ,—ասաց նա, գէմ անելով նրան նոր ածիլած թուղը:—Ե՞րբ ես եկել:

Նա լուռ համբուրեց կնոջ ճակատը:

—Non, il est impayable (չատ ծիծաղելի մարդ է սա)—գիմեց կոմսուհի Եկատերինա Իվանովնան իր ամուսնուն:—Ինձ առաջարկում է գնալ գետում լուացք անել և միմիայն գետնախնձոր ուտել: Շատ յիմարն է, բայց այնուամենայնիւ ինչ որ ինչդրում է՝ կատարիր: Սարսափելի դմբօ մարդ է,—ուղղեց նա իր ասածը:—Իսկ լսել ես, Կամենսկայան, ասում են, այնպիսի յուսահատութեան մէջ է, որ վախենում են՝ մեռնի,—գիմեց նա ամուսնուն:—Լաւ կը լինի՝ գնաս մօտը:

—Այո, սարսափելի բան է,—ասաց ամուսինը:

—Ուրեմն գնացէք, խօսեցէք, ես նամակներ ունեմ գրելու: Երբ Նեխլիւզովը մտաւ հիւրասենեակի կողքի սենեակը, նա զոռաց նրան հիւրասենեակից:

—Ուրեմն գրեմ Mariette-ին:

—Խնդրեմ, ma tante.

—Ուրեմն բաց տեղ կը թողնեմ, ինքդ կը գրես ինչ որ պէտք է այն խուզուածի համար, իսկ Mariette-ը կը յանձնարարի իր ամուսնուն: Ամուսինն էլ կը կատարի: Մի կարծիք, թէ չար սիրտ ունեմ: Քո protégée-ները (քո հովանաւորեալ կանայք) բոլորն էլ դարչելի բաներ են, բայց je ne leur veux pas de mal (ես նրանց վատ բան չեմ ցանկանում): Տէրն իրանց հետ: Դէ, գնա: Իսկ երեկոյեան անպատճառ տանը եղիր: Կը լսես Կիզէվէտտէրին: Եւ կ'աղօթենք: Եւ եթէ չը հակառակես, ça vous fera beaucoup de bien (քեզ վրայ շատ լաւ ազդեցութիւն կ'ունենայ): Ես գիտեմ, Ելէնն էլ, դուք բոլորդ էլ այդ բանում շատ էք յետ ընկել: Ուրեմն ցտեսութիւն:

XV

Կոմս Իվան Միխայլովիչը պաշտօնաթող մինիստր էր և հաստատ համոզմունքներ չէր:

Կոմս Իվան Միխայլովիչի համոզմունքները, երիտասարդ ժամանակից ի վեր, նրանումն էին կայանում, որ ինչպէս թըն-

չունին յատուկ է կերակրուել զնոռններով, ունենալ փետուրէ ու աղուամաղէ հագուստ և թռչել օդի մէջ, այնպէս էլ իրան յատուկ է ուտել թանկագին խոհարարների ձեռքով պատրաստուած թանկագին կերակուրներ, հազնել ամենայարմար ու թանկագին հագուստներ և ման գալ ամենահանգիստ ու արագընթաց ձիեր լծած կառքով, այնպէս որ այդ բոլորը պէտք է անպատճառ պատրաստ լինի նրա համար: Բացի այդ, կոմս Իվան Միխայլովիչի կարծիքով՝ որքան ինքը շատ ստանար զանազան տեսակ հասոյթներ պետական գանձարանից, որքան շատ շքանշաններ ունենար և որքան յաճախ տեսնուէր երկու սեռի բարձրաստիճան անձերի հետ, այնքան լաւ կը լինէր:

Իսկ մնացեալ ամեն ինչ, այդ հիմնական դաւանանքների համեմատութեամբ, կոմս Իվան Միխայլովիչը համարում էր չնչին ու անհետաքրքրական: Մնացեալ ամեն ինչ կարող էր այնպէս էլ լինել, այնպէս էլ: Այդ հաւատի համաձայն կոմս Իվան Միխայլովիչը 40 տարի ապրել էր ու գործել Պետերբուրգում և 40 տարուց յետոյ հասել էր մինիստրի պաշտօնի:

Այն գլխաւոր յատկութիւնները, որոնց չնորհիւ կոմս Իվան Միխայլովիչը՝ հասել էր այդ բանին, կայանում էին նրանում, որ, առաջինը, նա կարողանում էր հասկանալ գրուած թղթերի ու օրէնքների իմաստը և, թէև անչնորհ կերպով, բայց էլի կարողանում էր կազմել հասկանալի թղթեր և գրել՝ առանց ուղղագրական սխալների, երկրորդ, նրանում, որ նա չափազանց փառահեղ տեսք ունէր և, որտեղ պէտք լինէր, կարող էր ոչ միայն հպարտ, այլ և անմատչելի և վեհ տեսք ընդունել, իսկ որտեղ պէտք լինէր՝ կարող էր քսու լինել, երրորդ, նրանում, որ նա չունէր ոչ մի ընդհանուր սկզբունք կամ կանոն, ոչ բարոյական, ոչ պետական, այնպէս որ ամենքի հետ կարող էր համաձայն լինել, երբ պէտք լինէր, և հարկը պահանջած ժամանակ՝ անհամաձայն լինել ամենքի հետ: Այդպէս վարուելիս՝ նա միայն այն բանի մասին էր աշխատում, որ արտաքին վայելչութիւնը պահպանուած լինի և ակներև ինքահակասութիւն գուրս չը դայ, իսկ թէ բարոյական են արդեօք իր արածները ինքն ըստ ինքեան թէ՞ անբարոյական, արդեօք մեծագոյն բարիք կը յառաջանայ այդ բանից ուստայ կայսրութեան կամ քմբողջ աշխարհի համար թէ՞ մեծագոյն վնաս, այդ նրա համար բոլորովին միևնոյնն էր:

Երբ որ նա մինիստր դարձաւ, ոչ միայն բոլոր նրանից կախումն ունեցողները, — իսկ նրանից շատ մարդիկ ու մերձաւորներ կախումն ունէին, — այլ և բոլոր կողմնակի անձինք և նա ինքը հաւատացած էին, թէ նա շատ խելօք պետական անձն է:

Բայց երբ բաւական ժամանակ անցաւ, և նա ոչինչ չարեց ու ոչինչ ցոյց չը տուեց, և երբ, գոյութեան կռուի օրէնքի համաձայն, բոլորովին նոյնպիսի՝ թղթեր գրել ու հասկանալ սովորած, վայելչատես և անսկզբունք աստիճանաւորներ նրան տեղահան արեցին և նա ստիպուած եղաւ դուրս գալ պաշտօնից, ամենքը համոզուեցին, որ նա ոչ միայն մի առանձին խելքի տէր չէր, այլ և շատ սահմանափակ ու սակաւակիր թէ և շատ անձնապատան մարդ էր, որ հազիւ հազ էր կարողանում իր հայկաքններով հասնել պահպանողական թերթերի առաջնորդող յօդուածների բարձրութեան։ Դուրս եկաւ, որ նրա մէջ չը կայ ոչ մի բան, որ նրան զանազանելիս լինէր նրան տեղահան աւնող միւս սակաւակիր թէ անձնապատան աստիճանաւորներից և նա ինքն էլ հասկացաւ այդ, բայց այդ ամենին չը թուացրեց նրա այն համոզմունքը, թէ ինքը ամեն սարի պէտք է ստանայ մեծ քանակութեամբ արքունի փող և նոր չքանչաններ։

Կոմս Իվան Միխայլովիչը լսեց Նեխլիւզովի ասածը այնպէս, ինչպէս մի ժամանակ լսում էր գործերի կառավարչի զեկուցումները, և լսելուց յետոյ ասաց, որ երկու տոմսակ կը տայ նրան։ Տոմսակներից մէկը վճռաջինջ բաժանմունքի սենատոր Վօլֆի անունով էր։

— Շատ բաներ են ասում նրա մասին, բայց dans tous les cas c'est un homme très comme il faut (յամենայն զէպս, նա շատ վայելուչ մարդ է), — ասաց նա։ — Ես նրան շատ եմ պարտաւորեցրել, այնպէս որ ինչ որ կարողանայ՝ կ'անի։

Միւս տոմսակը ինդրադիրների յանձնաժողովի մի ազդեցիկ պաշտօնեայի անունով էր։ Ֆեդոսեա Բիրիւկովայի գործը, Նեխլիւզովի պատմածովը, շատ հետաքրքրեց կոմսին։ Երբ որ Նեխլիւզովը ասաց նրան, որ ինքը ուզում է նամակ գրել մի շատ բարձրագիւրջ անձնաւորութեան, նա ասաց, որ յիրաւի շատ սրտաչարժ գործ է այդ և որ հարկ եղած ժամանակը կարելի է պատմել այդ բանը։ Բայց խոստանալ չէր կարող։ Թող ինդիրը տրուի իր կարգին։ Իսկ եթէ զէպք լինի, — մտածեց նա, — եթէ հրաւիրեն petit comité-ի նիստի, դուցէ այնտեղ ասի։

Ստանալով կոմսից այդ երկու տոմսակները և մօրաբրոջ տոմսակը Mariette-ի անունով, Նեխլիւզովը իսկոյն և եթ դնաց տոմսակները յանձնելու։

Ամենից առաջ նա գնաց Mariette-ի մօտ։ Նա ճանաչում էր Mariette-ին, երբ նա 14—15 տարեկան աղջիկ էր իր հօրական ոչ հարուստ, բայց արիստօկրատ ընտանիքում, նա զիտէր, որ նա ամուսնացել էր կարիէրա անող մի մարդու հետ, որի մասին ինքը զանազան վատ բաներ էր լսել, և ինչպէս միշտ, պար-

սափելի ծանր էր նրա համար խնդիրքով դիմել այնպիսի մարդու, որին ինքը չէր յարգում։ Այդ զէպքերում նա միշտ ներքին մաքառումն էր զգում և դժգոհութիւն իրանից ու տատանումն — խնդրել արդեօք թէ չը խնդրել, բայց միշտ էլ վճռում էր, թէ պէտք է խնդրել։ Նա մի տեսակ կեղծութիւն էր զգում իր դրութեան մէջ, իբր խնդրող գտնուելով այնպիսի մարդկանց մէջ, որոնց ինքը այլ ևս իր շրջանի մարդ չէր համարում, բայց որոնք նրան իրանց շրջանի մարդ էին համարում։ Բացի դրանից նա զգում էր, իր ինքը նորից սկսում էր գնալ առաջուն սովորական շաւղով և ակամայ ենթարկւում էր այդ շրջանում տիրող թեթևամիտ ու անբարոյական մթնոլորտին։ Նա այդ զգացել էր արդէն Եկատերինա Իվանովնա մօրաքրոջ մօտ Գեռ այս առաւօտ, մօրաքրոջ հետ ամենալուրջ բաների մասին խօսելիս, նա երբեմն կատակի եղանակ էր տալիս խօսքերին։

Առհասարակ Պետերբուրգը, որտեղ նա վաղուց չէր եղել, գործում էր նրա վրայ իր սովորական՝ մարմնապէս կազդուրող և բարոյապէս ըթխանող տալանորութիւնը, — ամեն ինչ այնքան մաքուր է, յարմար ու բարեկարգ և մանաւանդ մարդիկ այնքան սակաւապահանջ են բարոյապէս, որ կեանքը շատ թեթեւ է թւում...

Մի հիանալի, մաքուր ու քաղաքավարի կառապան տարաւ նրան հիանալի, քաղաքավարի ու մաքուր փողոցապահ ոստիկանների կողքով հիանալի, մաքուր ջրջնքած սալաշատակի վրայով և հիանալի ու մաքուր տների մօտով այն տունը, ուր ապրում էր Mariette-ը։

Փողոցադռան մօտ կանգնած էին մի գոյգ անգլիական ձիեր աչքանոցներով և կառքի առաջամասում հպարտ-հպարտ նստած էր անգլիացու նման մի կառապան մինչև թշերի կեսը համառ ծնօտամիրութեամբ, համադգեստով և խարաղանով։

Չարմանալի մաքուր համադգեստ հագած մի գոնապան բայ արեց գուռը դէպի սրահը, որտեղ կանգնած էին աւելի ևս մաքուր ու երկզուռ համադգեստ հագած դրսեր՝ լաքէյը՝ հրաշալի սանրած ծնօտամիրութեամբ և օրապահ զեկուցատուն նոր ու մաքուր համադգեստով։

— Գեներալը չի ընդունում։ Գեներալունին նոյնպէս չի ընդունում և այս րոպէիս կը բարեհաճի դուրս գալ ամանից։

Նեխլիւզովը, հանելով կոմսունի Եկատերինա Իվանովնայի նամակը և իր այցելոտմար, մօտեցաւ այն սեղանին, որի վրայ դրւած էր այցելուների անունները դրի անցնելու մատեանը, և արդէն սկսել էր գրել, թէ ինքը յաւում է, որ տանը չը կարողանցու գտնել ոչ ճիշտ, երբ լաքէյը քաշուեց դէպի սանդուխը,

դռնապանը դուրս եկաւ փողոցը ու գոռաց կառապանին, որ կապը մօտեցնի դռան, իսկ ղեկուցատուն ձգուելով ու ձեռքերը ուղղահայեաց կախ տալով, սըսկուեց, աչքերով հանդիպելով ու ուղեկցելով իր կարճահասակ ու բարակակազմ աղջիկ պարոնին, որ իջնում էր սանդուխով իր վեհութեանը անհամապատասխան արագ քայլուածքով:

Mariette-ը սև զգեստով էր, սև թիկնոցով, մեծ ու փետրաւոր գլխարկով և նոր ու սև ձեռնոցներով և երեսին քօղ ունէր:

Նեխլիւզովին տեսնելով, նա վեր քաշեց քօղը, բայց արեց իր շատ սիրունատես երեսն ու փայլուն աչքերը և հարցական կերպով նայեց նրան:

— Աս, իշխան Դմիտրիյ Իվանովիչ, — ուրախ ու ախորժելի ձայնով ասաց նա: — Ես կը ճանաչէի...

— Ի՞նչպէս, դուք նոյն իսկ յիշում էք իմ անունը:

— Ինչպէս չը յիշեմ. ես ու քոյրս նոյն իսկ սիրահարուած էինք ձեր վրայ, — ասաց նա ֆրանսերէն. — բայց ի՞նչպէս փոխուել էք: Ախ, սրբան ջաւում եմ, որ ես ստիպուած եմ դուրս գնալ տանից: Սակայն, գնանք վերև, — ասաց նա, կանգ առնելով տատանման մէջ:

Նա նայեց պատի ժամացոյցին:

— Չէ, չի կարելի: Ես գնում եմ հոգեհանգստի Կամենսկայի մօտ: Նա սարսափելի վշտի մէջ է:

— Ի՞նչ Կամենսկայա է այդ:

— Միթէ չէք լսել. որդին սպանուել է մենամարտում: Պօզնի հետ է մենամարտել: Միակ զաւակն էր: Սարսափելի բան է: Մայրը սաստիկ վշտի մէջ է:

— Այո, լսել եմ:

— Չէ, աւելի լաւ է ես գնամ, իսկ դուք եկէք վաղը կամ այս երեկոյ, — ասաց նա և արագ ու թեթեւ քայլերով գնաց դէպի փողոցի դուռը:

— Այս երեկոյ չեմ կարող, — ասաց Նեխլիւզովը դուրս գալով նրա հետ գաւթիթը: — Գիտէք, ես գործ ունեմ ձեզ մօտ, — շարունակեց նա, նայելով գաւթին մօտեցող շիկադոյն ձիերի զոյգին:

— Ի՞նչ գործ:

— Ահա մօրաքոյրս ձեզ գրում է, — ասաց Նեխլիւզովը, տալով նրան մեծ փակագրով զարդարուած նեղլիկ ծրարը: — Կը կարգաք, ամեն ինչ կ'իմանաք:

— Գիտեմ. կոմսուհի Կատերինա Իվանովնան կարծում է, թէ ես գործերի մէջ ազդեցութիւն ունեմ ամուսնուս վրայ:

Սխալուում է։ Եւ ոչինչ չեմ կարող անել և չեմ էլ ուզում խառնուել։ Բայց, ի հարկէ, կոմսուհու և ձեզ համար եւս պատրաստ եմ շեղուել իմ կանոնից։ Ինչու՞նք է բանը, — ասում էր նա սև ձեռնոցով պատած փոքրիկ ձեռքով ի զուր փնտռելով գրպանը։

— Սմբոցում մի աղջիկ կայ բռնուած, մինչդեռ նա հիւանդ է և խառն չի եղել ոչինչում։

— Ի՞նչպէս է ազգանունը։

— Շուստովա, Լիդիյա Շուստովա։ Տոմսակումը գրուած է։

— Շատ լաւ, կ'աշխատեմ կատարել, — ասաց Mariette-ը և, թեթև շարժումով բարձրանալով փափուկ սոստառած ու արևի առաջ թեքերը պապղպղնող կառքը, բաց արեց հովանոցը։ Լաքէյը նստեց կառապանի կողքին և նշան արեց նրան, որ քչի կառքը շարժուեց, բայց նոյն բոպէին Mariette-ը հովանոցը դիպցրեց կառապանի մէջքին, և անգլիացրած նրբակաշի գեղեցկուհի մատակները, կծկելով սանձապիրի գեղեցիկ գլուխները, կանգ առան և սկսեցին կանգնած տեղում փոխփոխել նրբակազմ ոտները։

— Տեսէք, անպատճառ եկէք, միայն թէ անշահասէր կերպով, — ասաց Mariette-ը Նեխլիւզովին ու ժպտաց այնպիսի ժպտով, որի ոյժը շատ լաւ գիտէր, և կարծես վերջացնելով ներկայացումը՝ իջեցրեց վարագոյրը, — վայր քաշեց քօղը։ — Դէ, քչէք, — ասաց նա, նորից հովանոցը դիպցնելով կառապանի մէջքին։

Նեխլիւզովը հանեց գլխարկը, իսկ չիկագոյն, գուտարիւն մատակները, փռնչացնելով, գոլիեցին պայտերով սալայատակը և կառքը արագ-արագ սլացաւ, միայն երբեմն խորտուրորտ տեղերում կակուղ վեր-վեր թռչելով իր նոր ունեւորէ անուապատերի վրայ։

XVI

Յիշելով այն ժպտը, որ փոխանակեցին ինքն ու Mariette-ը, Նեխլիւզովը գլուխը թափ տուեց ինքն իր վրայ։

«Մէկ էլ տեսար յանկարծ կը խրուեմ այս կեանքի մէջ», մտածեց նա, երկուութիւն և կապիածներ զգալով, որոնք յառաջ էին գալիս նրա մէջ այնպիսի մարդկանց սիրաշահելու անհրաժեշտութիւնից, որոնց նա չէր յարգում։ Հաշուելով, թէ ուր գնայ առաջ, ուր՝ յետոյ, որպէս զի ստիպուած չը լինի մէկ էլ վերադառնալ, Նեխլիւզովը ուղղուեց նախ դէպի սենատը։ Այնտեղ նրան առաջնորդեցին դիւանատունը, ուր նա հոյակապ չինութեան մէջ տեսաւ ահագին թուով չափազանց քաղաքավարի և մաքուր աստիճանաւորներ։

Ինչպէս ասացին այդ աստիճանաւորները, Մասլովայի խնդիրքը ստացուած էր և յանձնուած քննելու և զեկուցում կազմելու նոյն սենատոր Վօլֆին, որի անունով նա նամակ ունէր մօրաքրոջ մարդուց։

— Իսկ սենատի նիստը այս շաբաթ է լինելու, բայց Մասլովայի գործը դժուար թէ ընկնի այդ օրը։ Սակայն եթէ խընդրէք, կարելի է յուսալ, որ այս շաբաթ նշանակեն, չորեքշաբթի օրը, — ասաց մէկը։

Սենատի զիւանատանը խնդրած տեղեկութեանը սպասելիս, Նեխլիւզովը դարձեալ լսեց խօսակցութիւն մենամարտութեան մասին և մանրամասն պատմութիւն, թէ ինչպէս էր հակառակորդը սպանել երիտասարդ Կամենսկիյին։ Այստեղ նա առաջին անգամը իմացաւ այդ՝ ամբողջ Պետերբուրգը զբաղեցնող պատմութեան մանրամասները։ Բանը այսպէս էր եղել։ Մի. քանի օֆիցէրներ պանդոկում ուտեցինք էին ուտելիս եղել և, ինչպէս միշտ, շատ խմել էին։ Մէկը ինչ-որ վատ բան էր ասել այն գնդի մասին, որտեղ ծառայում էր Կամենսկին. Կամենսկին նրան ստախօս էր անուանել։ Նա խփել էր Կամենսկիյին։ Հետեւեալ օրը մենամարտել էին։ Գնդակը զիպել էր Կամենսկիյի փորին և նա երկու ժամից յետոյ մեռել էր։ Պօզէնին ու վրաներին ձերբակալել էին, բայց թէև նրանց հաուպտվախտ էին նստացրել, սակայն ազատելու էին երկու շաբաթից յետոյ։

Սենատի զիւանատանից Նեխլիւզովը գնաց խնդրադիրներին յանձնաժողովը, այդ յանձնաժողովում ազդեցութիւն ունեցող աստիճանաւոր բարօն Վօրօբեովի մօտ, որ հիանալի բնակարան ունէր արքունի տան մէջ։ Դռնապանն ու լաքէյը խիստ կերպով յայտնեցին Նեխլիւզովին, որ բարօնին կարելի է տեսնել միմիայն ընդունելութեան օրերին։ Նեխլիւզովը նամակը յանձնեց ու գնաց սենատոր Վօլֆի մօտ։

Վօլֆը հէնց նոր նախաձաշել էր և ընդունեց Նեխլիւզովին, իր սովորութեան համեմատ նպաստելով մարտողութեանը սիգար ծխելով ու սենեակում քայլելով։ Վարդիմիր Վասիլիւովիչ Վօլֆը յիշաւ un homme très comme il faut էր, և իր այդ յատկութիւնը նա ամեն բանից բարձր էր դասում, նրա բարձրութիւնից էր նայում բոլոր միւս մարդկանց վրայ և չէր կարող բարձր չը գնահատել այդ յատկութիւնը, քանի որ միմիայն նրա շնորհիւ էր նա փայլուն կարիէրա արել, իր ցանկացած կարիէրան, այն է՝ որ ամուսնութեան միջոցով ձեռք էր բերել տարեկան 18 հազար եկամուտ տուող կարողութիւն, իսկ իր աշխատանքների միջոցով՝ սենատորի պաշտօն։ Նա իրան համարում էր ոչ միայն un homme très comme il faut, այլ և աս-

պետական ազնուութեան տէր: Իսկ ազնուութիւն ասելով նա այն էր հասկանում, որ չը պէտք է գաղտուկ կաշառքներ վերցնել մասնաւոր անձերից: Իսկ թախանձել, որ իրան տան արքունի գանձարանից հազար ու մի տեսակ ճանապարհածախսեր, նախապատրաստութեան միջոցներ և կապանքն՝ նա անազնուութիւն չէր համարում: Անազնուութիւն չէր համարում նաև այն, որ կողոպտել էր իր վրայ սիրահարուած կնոջն ու քենիին: Ընդհակառակը այդ համարում էր ընտանեկան կեանքի խելացի յարգարումն:

Վլադիմիր Վասիլիևիչի ընտանիքը կազմում էին նրա անձնագումարի կինը, քենին, որի կարողութիւնն էլ նա իր բուն էր հաւաքել, ծախելով նրա կալուածն ու փողը իր անունով բանկը դնելով, և հեզ, վախուորած, տղեղ աղջիկը, որ միայնակ ու ծանր կեանք էր վարում և որ վերջերքս սկսել էր ափոփանք գանել աւետարանականութեան մէջ, — Aline-ի և կոմսուհի Կատերինա Իվանովնայի մօտ կայացող ժողովներում:

Իսկ Վլադիմիր Վասիլիևիչի բարեհոգի որդին, — որ արդէն 15 տարեկան հասակում միբուքաւորուել էր և այն ժամանակից սկսել խմել ու անառակ կեանք վարել, որ շարունակում էր մինչև 20 տարեկան հասակը, — արտաքսուած էր տանից նրա համար, որ ոչ մի տեղ ուսումը չէր աւարտել և, վատ հասարակութեան մէջ ժամանակ անցնելով ու պարտքեր անելով, կոտորում էր հօր անունը: Հայրը մի անգամ վճարել էր որդու տեղ 230 ռուբլի պարտք, երկրորդ անգամն էլ վճարել էր 600 ռուբլի, բայց յայտնել էր նրան, որ այդ վերջին անգամն է և որ, եթէ նա չուղղուի, դուրս կ'անի նրան տանից և յարաբերութիւնները կը կտրի հետը. որդին ոչ միայն չէր ուղղուել, այլ և դարձեալ հազար ռուբլի պարտք էր արել և թոյլ էր տուել իրան ասել հօրը, որ իր համար առանց այն էլ տանջանք է տանը ապրելը: Այն ժամանակ Վլադիմիր Վասիլիևիչը յայտնել էր որդուն, որ նա կարող է գնալ ուր ուզում է, և որ նա այլ ևս իր որդին չէ: Այնուհետև Վլադիմիր Վասիլիևիչը այնպէս էր ձեռնցնում, թէ ինքը որդի չունի և տնեցիներից ոչ ոք չէր համարձակուում խօսել նրա հետ որդու մասին: Եւ Վլադիմիր Վասիլիևիչը լիովին հաւատացած էր, թէ ինքը ամենալաւ կերպով է յարգարել իր ընտանեկան կեանքը:

Վօլֆը, որ քայլում էր առանձնատնեկուում, կանգ առաւ և բարեկց նեխիլուզովին ու սկսեց կարգալ տոմսակը՝ իր սովորական փաղաքշական ու մի քիչ հեզնական ժպտով, որ ակամայ արտայայտութիւն էր այն գիտակցութեան, թէ ինքը իր կօմիլֆօյութեամբ բարձր է մարդկանց մեծամասնութիւնից:

—Նստեցէք, խնդրեմ, իսկ ինձ կը ներէք: Ես կը շարունակեմ քայլել, եթէ թող կը տաք,—ասաց նա, ձեռքերը խրելով իր վերնաբաձկոնի գրպանները և թեթև ու կակուղ քայլերով ման գալով իր խիստ ոճով կահաւորած մեծ առանձնասենեակի անկիւնագծով:—Շատ ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալու և, աւելորդ է ասել, մեծ ուրախութեամբ կ'աշխատեմ կատարել կոմս Իվան Միխայլովիչի ցանկութիւնը,—ասաց նա բերնից բաց թողնելով անուշաբոյր կապտագոյն ծուխը և զգուշութեամբ մի կողմ տանելով սիգարը, մոխիրը չը թափելու համար:

—Ես միայն այն էի խնդրելու, որ գործը շուտով նշանակուէր, որովհետև եթէ մեղադրեալը պէտք է Սիբիր գնայ, ցանկալի է, որ շուտ գնայ,—ասաց Նեխիլեզովը:

—Այո, այո, Նիժնիյից մեկնող առաջին չողենաւերով, գիտեմ,—իր ներողամիտ ժպտան երեսին ասաց Վօլֆը, որ միշտ առաջուց գիտէր այն բոլոր բաները, ինչ որ սկսում էին նսել նրան:—Ի՞նչպէս է մեղադրեալի ազգանունը:

—Մասլովա...

Վօլֆը մօտեցաւ սեղանին ու նայեց նրա վրայ դրուած թղթերի մէջ:

—Ծիշտ է, Մասլովա: Շատ լաւ, ես կը խնդրեմ ընկերներիս և գործը կը քննենք չորեքշաբթի օրը:

—Կարո՞ղ եմ փաստաբանին հեռագրել այդպէս:

—Ախ, փաստաբան էլ ունէք: Ինչի՞ պէտք է: Բայց եթէ ուզում էք, ինչու չէ, հեռագրեցէք:

—Գուցէ վճառջինը առիթներ քիչ կան,—ասաց Նեխիլեզովը,—բայց, կարծում եմ, գործիցը պարզ երևում է, որ դատապարտութիւնը թիւրիմացութեան հետևանք է:

—Այո, գուցէ այդպէս է, բայց սենատը չի կարող գործը քննել ըստ էութեան,—խստօրէն ասաց Վլադիմիր Վասիլիեվիչը, նայելով սիգարի մոխրին:—Սենատը հսկում է միայն, որ օրէնքը կանոնաւոր կերպով գործադրուի և մեկնուի:

—Սակայն սա, իմ կարծիքով, բացառիկ դէպք է:

—Գիտեմ, գիտեմ: Բոլոր դէպքերը բացառիկ են: Մենք կ'անենք, ինչ որ պէտք է: Ահա մեր բոլոր անելիքը:—Մոխիրը դեռ կենում էր իր տեղում, բայց արդէն ճաքել էր և փտանդի մէջ էր:—Իսկ դուք ո՞ւշ ուշ էք լինում Պետերբուրգում,—հարցրեց Վօլֆը, այնպէս պահելով սիգարը, որ մոխիրը վայր չը թափուի: Մոխիրը այնուամենայնիւ տատանուեց, և Վօլֆը զգուշութեամբ մօտեցրեց սիգարը մոխրամանին, ուր և փուլ եկաւ նա:—Իսկ ի՞նչ սարսափելի բան է Կամենսկիյի դէպքը,—ասաց նա:—Հիմնալի երիտասարդ էր: Միամօր զաւակ: Մանաւանդ

մօր դրութիւնը, — ասում էր նա, գրեթէ բառ առ բառ կրկնելով այն բոլորը, ինչ որ ամենքը Պետերբուրգում ասում էին այդ ժամանակ կամենակիլի մասին:

Մի քիչ էլ խօսելով Կատերինա Իվանովնայի մասին և նրա ոգևորութեան մասին կրօնական նոր ուղղութեամբ, որ Վլադիմիր Վասիլիեւիչը ոչ դատապարտում էր, ոչ արդարացնում, բայց որ նրա պէս կօմիլֆօ մարդու համար, ակներևաբար, աւելորդ բան էր, նա զանգահարեց:

Նեխլիւդովը հրաժեշտի ողջոյն տուեց:

— Եթէ ձեզ համար յարմար է, եկէք ճաշելու, — ասաց Վօլֆը, ձեզք տալով նրան, — թէկուզ չորեքշաբթի օրը: Այն ժամանակ ես ձեզ դրական պատասխան կը տամ:

Ուշ էր արդէն, և Նեխլիւդովը գնաց տուն, այսինքն մօրաբերով մօտ:

XVII

Կոմսուհի Կատերինա Իվանովնայենց մօտ ճաշում էին ժամի եօթ և կէսին, և ճաշը մատուցանւում էր նոր ձևով, այնպիսի ձևով, որ դեռ չէր տեսել Նեխլիւդովը: Սպասաւորները կերակուրները դնում էին սեղանի վրայ ու իսկոյն և եթ հետոնում, այնպէս որ ճաշողները իրանք էին վերցնում կերակուրը: Տղամարդիկ թոյլ չէին տալիս, որ տիկիները նեղութիւն կրեն ու աւելորդ շարժումներ անեն, և, իբր ուժեղ սեռի ներկայացուցիչներ, արիաբար յանձն էին առնում տիկիներին ու իրանց համար կերակուր վերցնելու և խմիչքներ լցնելու ամբողջ ծանրութիւնը: Իսկ երբ կերակուրը ուտում պրծնում էին, կոմսուհին սղմում էր սեղանի մէջ շինուած էլեքտրական զանգի կօճակը և սպասաւորները անձայն ներս էին մտնում, արագ-արագ հաւաքում ու փոխում ամանները և բերում հետեակ կերակուրը: Թէ կերակուրները, թէ գինիները՝ նուրբ էին: Մեծ ու լուսաւոր խոհանոցում բանում էր ֆրանսիացի խոհարարապետը իր երկու սպիտակ օգնականներով: Ճաշողները վեց հոգի էին՝ կոմսն ու կոմսուհին, նրանց որդին, թիկնապահ գնդի մի մօսյլ օֆիցէր, որ արմունկները դնում էր սեղանի վրայ, Նեխլիւդովը, ֆրանսուհի ընթերցուհին և կոմսի կալուածների գլխաւոր կառավարիչը, որ գիւղիցն էր եկել:

Այդտեղ էլ խօսակցութիւն սկսուեց մենամարտի մասին: Ամենքն էլ ներողամիտ էին վերաբերւում Պօզէնին, որ պաշտպանել էր համադգեստի պատիւը: Միայն կոմսուհի Կատերինա

իվանօվան էր, որ իր ազատութեթեամբութեամբ դատապարտում էր սպանողին:

— Լաւ է էլի, հարրեն ու սպանեն կարգին երիտասարդներին... Ինձից որ կախում լինէր, երբէք չէին ների,— ասաց նա:

— Ես այդ չեմ կարողանում հասկանալ,— ասաց կոմսը:

— Ես գիտեմ, որ դու երբէք չես հասկանում իմ ասածը, — ասաց կոմսունին դառնալով դէպի Նեխիլեզօվը — ամենքը հասկանում են, բացի ամուսնուցս: Ես ասում եմ, որ մեղքս է գալիս մայրը, և չեմ ուզում, որ մարդու սպանեն ու յետոյ էլ շատ գոհ լինեն:

Այդ միջոցին նրա որդին, որ մինչ այդ լուռ էր, սկսեց պաշտպանել Պօզնինն ու յարձակուեց մօր վրայ, բաւական կուպիտ կերպով ապացուցանելով, որ օֆիցէրը չէր կարող ուրիշ կերպ վարուել և որ այլապէս նրան կ'ենթարկէին ընկերական դատի ու դուրս կ'անէին գնդից: Նեխիլեզօվը լսում էր, առանց խօսակցութեանը խառնուելու և, իբր նախկին օֆիցէր, հասկանում էր, թէ և չէր ընդունում, երիտասարդ Չարսկիյի պատճառանքները, բայց միևնոյն ժամանակ ակամայ դուզադրում էր ընկերովը սպանող օֆիցէրին բանտումը տեսած գեղեցկադէմ պատանի կալանաւորի հետ, որ տաժանակիր աշխատանքների էր դատապարտուած կռուի մէջ գործած սպանութեան համար:

Նա պատմեց այդ դէպքը: Սկզբում կոմսունի Կատերինա Իվանօվան համարեա համաձայնեց իր քորդու հետ, բայց յետոյ լուեց, ինչպէս և ամենքը, և Նեխիլեզօվը զգաց, որ այդ բանը պատմելով ինքը կարծես մի տեսակ անվայել բան արեց:

Երեկոյեան, ճաշից շատ չանցած, մեծ դահլիճում, ուր մի առանձին տեսակ, կարծես դասախօսութեան համար, շարել էին բարձր ու քանդակակերտ թիկունքներով աթոռներ և սեղանի առաջը դրել քարոզչի համար մի բազկաթոռ և մի փոքրիկ սեղանի վրայ շիշով ջուր, սկսեցին հաւաքուել ժողովականները լսելու համար եկուոր քարոզիչ Կիզէվէտտէրին:

Փողոցադռան մօտ կանգնած էին թանկագին կառքեր, թանկագին կերպով կահաւորուած դահլիճում նստած էին մետաքսապատ, թաւապատ ու ժանեակապատ տիկիւնների դնովի մազերով և ձգուած ու դնովի իրաններով: Տիկիւնների արանքին նստած էին տղամարդիկ — զինուորական ու քաղաքացիական զգեստներով և նրանց թւում հինգ հոգի հասարակ դասակարգից՝ երկու բակապան, մի խանութպան, մի լաբէյ և մի կռապան:

Կիզէվէտտէրը, որ մի ամբակազմ ու սպիտակել սկսած տղամարդ էր, անգլիերէն էր խօսում, իսկ մի ջահէլ, նիհար ու

